

ԱՐԵՈՅ ԱՄՍԱԳԻՐ


ԱԶԳԱՅԻՆ, ԲՈՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ,
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1877

ՍԵՊՏԵՄԲԵՐ




ՄՃԿԻԹ ՕՄԱՐԱՅ (ՀԻՆ Տ. ՍՈՂՈՄՈՆԻ)

ՅԵՐՈՒՍԱՂԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԵԱՆՑ

Մը ին
թուի



This block contains three decorative metalwork fragments, possibly from a scabbard or hilt. The first two pieces are rectangular plates with a repeating floral or foliate pattern in a raised, engraved style. The third piece is a curved, semi-circular element, also featuring a similar decorative motif.

Թ. Ա. ԽՈՎԱՆԻՔԻ ՏԱՐԱ

ԱՄՍԱԳԻՐ

ԱՐՑԵՐ 30
1877 •

ԱԶԳԱՅԻՆ · ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ · ԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԱՅ. ԵՐԱ. ՇՈՒ. ԽՈՎ. ԿՈՎ. ԿՈՎ. ԿՈՎ.

Յիսուսի ամենահաւատարիմն և պի-
րելի աշակերտն Յովաննես կը պատ-
մէ Ս. Աւետարանին մեջ Առաւած-
որդւոյն Յիսուսի մի տեսութիւնը եւ
խօսակցութիւնը՝ Հրեից ազգէն անար-
գուած, նոյա հետ հաղորդակցութե-
նէ մերժուած, անարդ և պիղծ համա-
րուած մի խեղճ Սամարապի կետ հետ-

Յիսուսի սցյա արարքն բաց կ վեր-
ջի մասերէն , սրով Յիսուս աստուած-
օրէն կը յայտնէ կեռջ գտղոնիքներն և
կինը հաւատ կ'ընծայէ նորա Աստուա-
ծութեան եթէ մարդ առանց ուշա-
գրութեան և խորին մասդպութեան
բնիթեանու , կը թուի իրեն մի անելան

կամ մի այնպիսի հասարակ գիպուած, որոյ նմանը շատ անդամ շատ մարդու եւս կրնայ պատահած լինիլ իւր կե-նաց զջանին մէջ. որովհետեւ շատ անդամ կը նայ պատահիլ աշխարհի մէջ, որ հարկն ու նեղութիւնը ամենաւ ամբարտաւան, մեծամիտ եւ արհաւ մարհու մարդն անդամ այնքան խո-նարհեցնեն, որ ստիպուի իւր արհաւ մարհած եւ անարդած մարդէն օգ-նութիւն իննդրել, թէեւ ակամոյ կա-մօք և մէծ դժուարութեամբ. մարդ, կային ակարութեան մօտ հարկի այս պահանջն՝ կրնայ այս կարծէքն յառաջ ընկրել Յիսուսի այն Առմարտափի կնոջ հետ

ունեցած տեսութեաննկատմամբ, առ կոյն Աստուածային ամենակարտլութեամս, զոր ունելը Ցիսուս լիովին իբրեւ ճշմարիտ Աստուած և Որդի Աստուածոյ, մարդկային մատաց այս ենթադրութիւնն կը ցրի խապառ և կ'ոչնանոյ, որուն կը յաջորդէ մի բոլորալին տարբեր զգացում և տարբեր խորհրդածութիւն և որ որքան նուրբ և խորազնին լինի, այնքան հիացումն եւ բերկրախառն զարմանք կը պատճառէ մարդոյ հոգւոյն, արդարեւ եթէ մարդուշադրութեամբ ընթեռնու եւ մըտադրութեամբ իմաստասիրէ Ցիսուսի սոյն ամենապարզ արարքը՝ պանչանաւլով կը տեսնէ անոր մէջ նորա պարզութեան և սովորականութեան հետ միասին մի այնպիսի վսեմութիւն և բարձրութիւն, որոց վերայ մարդոյ սիրտը կը զեղանի և հոգին կը բերկրի անպատճում հիացմամբ, որովհետև Աստուածոյ Որդւոյն սոյն արարքն զիստուածի արդիւնք կամ մի աննպատճի գործ չէ, այլ կանխատեսութեամբ և յատուկ նպատակաւ գործուած նշանաւոր իրողութիւն է, որոյ մէջ այնպիսի մեծ խորհուրդներ, վեեմ զգացութիւններ եւ բարձր նպատակներ կը պարունակին, զորս արժան է որ ամեն մարդ, ևս նա մանսւանդ Քրիստոնեաց մարդ՝ գիտնայ և իմանայ, ուստի եւ արժան է որ սոյն փոքրիկ եւ որարդ պատմական դէպքն առարկայ լինի մեր ուշադրութեան և խորհրդածութեան որքան որ կրնայ թափանցել մեր մտաց տեսութիւնն և որքան որ կրնայ զօրել մեր հոգւոյ լոյսն, և որպէս զի մեր սիրելի ընթերցող հարը և եղբարք կարող լինին աւելի լաւ հասկանալ և ուշադրութեամբ, ի միտ առնուլ, հարկ կը համարիմք նախ կրինել աստ նոյն համառօտ պատմութիւնը իւր մանրամանութեամբ և պարզութեամբ,

զար հետեւեալ կերպիւ կը նկարագրէ Սուրբ Աւետարանիցն Յավհաննես, Աստուածորդին Ցիսուս, որ երբեմն քարողելով և երբեմն եւս հալածական քշուելով Հրէաստանի մէջ աստանդական կը թափառէր, մի օր եւս Փարիսեցւոց վատ նախանձէն խուստիելու համար Հրէաստանը թողղով՝ երբ Գալիլեա կը վերադառնար, Սամարիայէն անցնելու ատեն կը հանդիպի նորա Սիւքար անուանեալ մէկ քաղաքին, որոյ մէջ կը գտնուէր Ցակոր նահապեաի փոքրած ջրհորներէն մին, կը կարծուի թէ նոյն ճանապարհորդութիւնը ամօրան եղանակի մէջ, օրուան վեցերորդ ժամուն լինելով՝ Ցիսուս, որ միշտ հետի կը ճանապարհորդէր, իբրեւ մարդ՝ յոգնած և վաստակաբեկ եւ արեգական միջօրեայ Ճառագայթից հրատապ ջերմութենէն նեղուելով, մի քիչ յօգնութիւն առնուելու զովանալու համար, կը նստի այն ջրհորի մօտ փոքր ինչ հանկցելու մտօք, մի և նոյն ժամանակ նոյն քաղաքի բընակիններէն կին մը կուգայ նոյն աղքերէն ջուր հանելու՝ անշուշտ իւր տան համար, այս միջոցին Ցիսուս, որ մի նակ էր անդ, (որովհետև իւր աշակերտներն քաղցած լինելով՝ գնելու) կը խնդրէ այն կնոջմէն, որ իւր քաշած ջրէն իրեն եւս խմել տայ, կինը նկատելով որ խնդրովն մի Հրէայ է, զարմանալով նորա խնդրոյն վերայ՝ կը պատասխանէ թէ՝ Դու որ Հրէայ ես՝ ինչպէս ինձմէ ջուր կը խնդրես՝ Սամարացի կիմիկ մը, որովհետև Հրէայք Սամարացւոց հետ յարաբերութեն չեն մտներ, Ցիսուս առանց նորա սոյն իւրաւացի զարմանաց որ և է բացարութիւն տալու՝ մի բոլորալին տարբեր պատասխան կը տայ թէ՝ եթէ գիտնոցիր դու Աստուածոյ պարգևենե-

բը և հանաբէիր թէ, ովէ է քեզմէ ջուր խնդրովն, անշուշտ գու անոսմէ կը խնդրէիր և նա կը ասայր քեզ կենդանի ջուրը, պարզամիտ և ռամիկ կինն առանց բան մը իմանալու իւր խնդրումատոց ուղեւորի այս աւելի զարմանալի պատասխանէն և ևս զարմացած՝ կ'ըսէ, Տէր, ըսհորը խոր է և գու դոյլ անգամ ջունիս, ուստի ուրեմն պիտի կարողանաս կենդանի ջուր տալ ինձ, միթէ դու մեր հայր Յակոբէն մէծ մէկն ես՝ որ այս ջրհորը մեզ թողարց, ուրիշ թէ ինք խմեց և թէ իւր որդիքն ու խաջնիքը, Յիսուս առանց իւր խօսացութեան եղանակը փոխելու՝ կարծես և եւս զարմանք պատճառելու մոօք արգէն զարմանահար խեղճ կնոջ կը պատասխանէ մի և նոյն մթին բայց վատահ լեզուով թէ՝ ամեն ով որ այդ ջրէն կը խմէ կրկնի անգամ կը ծառ բաւի, իսկ այն որ իմ տուած ջրէս խըմէ, յաւիտեան չը պիտի ծարաւի, այլ այն ջուրը զոր ես անոր պիտի տամ, պիտի լինի անոր համար յաւիտենական կենաց մէջ բժիշած ջրոյ աղբիւր, կինը անշուշտ գարձեալ առանց բան մը իմանալու Յիսուսի խօսքերէն, մի այն նկատելով որ նա կենաց դիւրութեան համար մի լու բան կը խօստանաց կը պատասխանէ՝ Տէր տուր ինձ այդ ջրէն, որ այլ եւս չը ծարաւիս և ամեն օր այս տեղէն ջուր տանելու աշխատութենէն աղատուիմ, ուրաւն կը պատասխանէ Յիսուս՝ թէ գնաց քու այրդ աստ կոչէ, կինը կը ստէ ըսելով՝ թէ ես այր ջունիմ, իսկ Յիսուս յանդիմանական կերպիւ կը պատասխանէ թէ ուղիղասացիր, թէ ես այր ջունիմ, որովհետեւ հինգ հատ այր փախած ես և այժմեան ունեցածդ քուիդ չէ, այսինքն ասօրինի է, կինը եւս առաւել զարմանալով այս անծանօթ մարդոյն իւր գաղտնեացը վերա-

հասու լինելուն վերայ, կը կարծէ թէ Յիսուս մարգարէ մը եղած լինի, ուստի հաւատոց մասին իւր մի տարակոյ, որ փարատելու համար կ'ասէ Յիսուսին, թէ մեր Հայրերն այս լերանց վերայ երկրպագութիւն կ'ընէին, իսկ դուք կ'ասէք թէ՝ միայն Երուսաղէմին է ուր արժան է երկրպագութիւն ընել, որուն պատասխանելով Յիսուս՝ կ'ասէ թէ ովկ կին, հաւատա ինձ, որ ժամանակ պիտի գայ, ուր ոչ այն լերանց եւ ոչ Երուսաղէմի մէջ պիտի երկրպագանեն Հօր, դուք կ'երկրպագէք անոր՝ զոր չչք ճանաշեր, իսկ մենք կ'երկրպագեմք անոր, զոր կը ճանաշենք, սակայն պիտի գայ ժամանակ և այժմ իսկ է՝ ուր ճշմարիտ երկրպագուներն, պիտի երկրպագանեն Հօր՝ հոգւով եւ ճշմարտութեամբ, որովհետեւ Հայրն ալ այնպիսի երկրպագողներ կը խնդրէիրեն, Աստուած հոգի է և անոր երկրպագողները ուէտք է հոգւով եւ ճշմարտութեամբ երկրպագանեն, եւ այլն :

Աղքաղան Աւետարանին սոյն համառօտ տրամախօսութեան պատմութիւնը աւարտելէ զինի՝ կը յացնէ թէ, այս միջոցին Յիսուսի աշակերտները վրայ գալով, կը զարմանան՝ երեկը տեսնեն Յիսուսի մի այնպիսի կնոջ հետ խօսիլն :

Այսն համառօտ պատմութիւնը իւր նցնութեամբ աստ կրինելին զինի, այժմ պիտի սկսինք սորոս բարոյական նպատակի և իմաստին վրայ մեր տեսութիւր յառաջ բերել, և որպէս զի աւելի պարզ եւ զիւրըմբանելի լինի՝ աւելի պատշաճ կը համարինք զայն մասանց վերածելով, հետզհետէ իւրաքանչերի վրայ ընել մեր տեսութիւնը, ուստի հետեւեալ կերպիւ կը բամնենք, Ա, Յիսուսի ջուր խնդրելու նողատաշը կը և կնոջ զարմանք յայտնելու պատ-

ճառը . Յ . կնոջ ստելը և Յիսուսինորա գաղտնիքը յայտնելը . Գ . կնոջ հաւատքը եւ ազօթատեղլոյ մասին առ Քրիստոս ուղղած հարցումը . Դ . առ այս Յիսուսի տուած բացատրութիւնը և իւր Աստուածութեան յայտնութիւնը առ կինն . Ե . Յիսուսի աշակերտաց զարմանքը սոյն տեսութեան վրայ :

(Եպրակնիւլ .)



ԺՈՂՈՎ.ՐԴԵԱՆ ԱՂԵՏՆԵՐ

Կարելի է թէ ընթերցողք կարծեն , որ ներկայ պատերազմի տիսուր հետեւանաց վերայ պիտի խօսիմք , որոց ենթարկուած է համայն թուբքիա . բայց մեք այդ առօրեայ պատերազմէն աւելի սոսկալի մի պատերազմ պիտի ցուցնեմք , որ քան զառաջինն աղետալի է , քան զառաջինն աւերիչ եւ քանդիչ . Այս պատերազմը ժողովը ըրդեան տգիտութիւնն է , որ աղբիւր է բարոյական և նիւթական ամեն աղէտից եւ ամեն թշուառութեանց : Առաջնոյն մէջ՝ դեմքնիս թշնամի մի կայ , որ մեր իրաւանց , մեր հայրենեաց և աղատութեան կը սպառնայ . որով մեք իբրեւ զաւակերկին , իբրեւ իրաւանց տէր և իբրեւ մարդ՝ աղատութեան սիրահար , կը սատիկուիմք զէնք առնուլ և թշնամոյն դիմագրաւել , կամ յաղթահարել եւ կամ նահատակիլ աղատութեան , իրաւանց և հայրենեաց եռոտաւնեայ սեղանին վերայ . իսկ երկրորդին մէջ մեք եմք մեր թշնամին , մեք մեր անձին դէմ կ'ոգորիմք , մեր իրաւաւն-

ըլ մեր վատ ու եսական կրից կը զոհեմք . մեր մանկուոյն բարոյական և նիւթական հացը անոր ձեռքէն ու րերնէն կը խլեմք . վերջապէս կը զոհեմք զմեղ , կը զոհեմք ընտանիքը և կը զոհեմք մատաղ սերնդեան ապագայն առանց սոսկալու անիծից այն շանթերէն , որով ապագայն զմեղ պիտի հարուածէ , նախատանաց այն սեւ դրոշմներէն , որք մեր ճակատը պիտի դրոշմաւորեն իբր յաւիտենական դատապարտութիւն :

Այս օրինակ մի պատերազմ , որ մեր ազգին նման աղգերու քաղաքական պատերազմը կը համարուի , շատ ոլատճառ ներէ յառաջ կը գայ , բայց ամենամեծ պատճառ համարուած է մեր աղգին համար Առաջնորդական ինդի ըսուածը : Կարելի է ըսել որ վերջին տարիներուս մէջ մի գաւառ չը մնաց ազատ այս աղգավնաս ինդրոյն հետեւանքներէն . գաւառ չը մնաց , ուր համասեռ , համարիւն և համազգի եղացը՝ իբրեւ գաւառոր արեանարբու թշնամիներ զիւրար նախատած , զիւրար մրուտած , միւմեանց պատիւը , իրաւունքը ունակոխ ըրած չըլլան : Ուստի յառաջ կը գան այս ամեն չարիքները . Առաջնորդի մը փոփոխութենէն : Առաջնորդը մեծ մասամք իբրեւ անձնարած հովիւներ՝ երբ գաւառի մը հասարակութեան հովիւ կամ տեսուչ կը կարգուին , փոխանակ ըստ կոչման եւ պարտաւորութեան՝ ժողովուրդը մի եւ նոյն հայրական սիրով և համակրութեամբ սիրելու , խտիրներ կը գնեն . զանոնք , որք աւելի յցս կը տան իբրենց փորեւ քսակը լեցնելու , կը խնկարիեն և անոնց կամարար գործիներն կ'ըլլան . հասարակ ժողովուրդը կը նեղուի եւ կը տառապի , փոյթերնին չէ . Ժողովուրդը կ'ողբայ , կ'արտասուէ , անոնց սրտին վերայ կաթիլ մը չիյնար . եւ

շատ անգում՝ ՚ի չնորհուկս քառակապարար ազաներուն՝ Առաջնորդը կը տառդնապեն և կը հարատահարեն ժողովուրդը. ինչ ընէ խեղջ գիւղացին, ամբողջ տարին շարացար տշխատելով, ամարտն և ձմերան անըմբերելի խըստութեանց գլուխ խոնարհեցնելով՝ հաղիւ ուրեմն կարող կ'ըլլայ իւր ընտանեաց օրտապահիկը ճարել, ուստի գտնէ, որ Առաջնորդ հայր սուրբին տայ. որպէս զի իրեն ալ հայրական աչքով ու սրտով նայի, որպէս զի իրեն տառապանաց ժամանակ մի քանի միսիթարական խօսք խօսի, չունի, որ տայ, ուստի և կը զբրկուի այս մեծ բարիքներէն. Ժողովուրդը իսպառ ճարահատեալ՝ Ազգ, Վարչութեան գթոյն եւ կարեկցութեան կը գիտէ, բողոքց ընդարձակ մահսերագրութիւններ մի զինի միւսոց կը հասնին ՚ի Պատրիաբարան. հաղիւ Վարչութիւնը կը կարդայ ասոնք, ուրիշներ կը գան Առաջնորդի կուսակիցներէն. Եթէ առաջնոները Առաջնորդը իրրեւ հարստարիւ, իրբեւ վարձիրան կը նկարագրէին. Երկրորդ մահսերները՝ իրբեւ բարերար եւ անձնադիր Պահ մի կը տառտամսի Վարչութիւնը այս երկու սուրբին մէջ. ամիսներ եւ տարիներ կ'անցնին. Ժողովուրդի տաղնապը կը շատնայ. Երկպառակութիւնը կը սաստիանայ, կուսակիցութիւնը կ'ըստուարանան եւ կը տարրանան. ամեն մարդ իւր գործը թողած այս խնդրով կը սպազի, Երկրագործին հողը անմշակ կը մնայ, արհեստաւորին գործերն երեսի վերաց. գաւառական վարժապետներն ալ, որ մեծ տեղ մի կը բռնեն այս ճակատամարտին մէջ, իրենց վեմ պարտաւորութիւնը մէկ կողմ թողլավ՝ այս կամ այն կուսակցութեան գրագրութեան պաշտօնը կը վարեն. Երթալով խնդիրը ուրիշ գոյն ու կեր-

պարանք կ'առնու. Ժողովուրդը իրեւ վերջին յազմանակ՝ կրտպառնաց բաժնուիլ իւր մայրէնի Եկեղեցիէն. ըստառանալիքը գործի կը փախտի, խումբ խումբ Բողոքականաց կոմ Պապականաց գիրիկ կը գիտէն. ոլ կրնայ մերժի, որ մեր ազգին մէջ կրօնափախութիւններն մեծ մասամբ այս խնդրէն յառաջ եկած չեն: Ուր ուրեմն Վարչութիւնը կը սմագի, որոշում կ'ընէ այս խնդրէն տեղւոյ Առաջնորդը ՚ի Պօլիս կոչել. կը հաղորդուի որոշումը, Առաջնորդը պատճառանիքներով կ'երկարածրէ իւր երթը, վասն զի տակաւին խաղալիք գրեր ունի, կը կրկնուի եւ սովորողականութիւն կը տրուի. բայց որովհետեւ գիտէ գործին վախճանը իւր օձիքը ազատելու ճարը կը նայի. Առաջնորդն ալ իւր մարդիկներով կամ Պապականաց և կամ Բողոքականաց կը գիտէ. գնացողները կ'երթան և շատ անգամ անընկճելի յամառութեամբ. բայց ոլ կը վեասէ. — Ազգը և Եկեղեցին. ինչէ այս ամենուն պատճառը. — Հովուաց և հօտին տգիսութիւնը. բայց ըստ մեզ հօտէն աւելի հովեւք պատասխանատու են մարդկանց եւ Աստուծոյ գատաստանին առջեւ:

Ահաւասիկ մեր ամեն ըսածներն հաստատող հետեւեալ կոորը, զոր Խարբերթէն գրուած մի նամակէ կը քաղեմք, Ազգ. Բարեխնամ Վարչութեան խորին ուշադրութեան կը յանձնեմք:

“ Աւելորդ չեմ համարեր Խարբերթու ժողովսկեան կենաց հիւծեալ պատկերը նկարագրել.

” Այսօր Երկու տարի է, որ Առաջնորդական ընտրութիւն կը լինի եւ չը վերջանար. Ժողովսկերդը ըրս կուսակցութեանց բաժնուած է, Պետրոսեան, Առաջնորդն, Եղիկեան եւ

շեղոք, որով ժողովրդեան կենսական ուժը բոլորովին սարառեցաւ և այսօր յետին թշուառութեան մէջ կը հեծէ. ոչ կարողէ իւր օրապահիկ հացն ձարել, և ոչ իւր կրօնից կամ ազդութեան վերաբերեալ ձեռնարկ մի ընել.

” Ժողովարդը շունի ուստւմնական եւ ազգասէր Առաջնորդ մի . շունի գործօն և խորհող ժողովներ ձեռնահաս անձերէ բազկացեալ ըստ Սահմանադրութեան Ազդին . շունի Եկեղեցեաց բեմերուն վերայ լաւ քարոզիներ և ոչ դպրոցաց մէջ լնտիր ուսուցիչներ, ուստի ժողովարդը խուռն բազմութեամբ Պապականաց և Բողոքականաց ժողովարանները կը դիմեն, նոյնպէս յանկտին անոնց դպրոցները կը յաճախէ .

” Սայդ կըսեմ, որ Ազդի հոգեւոր գլուխները եթէ չը փութան վաղայս աղէտից առաջքն տռնելու, քիչ ժամանակին, Խարբերթէն Յողոքական և Պապական Հայ անունները միայն պիտի լսուին . որովհետեւ ըստ առածին, “ Գայլը մշուշոտ օրերուն կը ըսպասէ ” :

” Քիչ գրեցի, շատ իմացէք . լոելու ժամանակ չէ ժամանակը . Ազդը իւր նիւթական կեանքին հետ, նախնեաց ուղղափառ հուտառը եւ Ազգութիւնը կորսնցնելու վտանգին մէջ է ” :



ԱՍԴԱԳԻՏԱԿԱՆ

ԵՐԿԻՐ Ծ

Արեգակին հաշուելով երկիրը ըստ հեռաւորութեան երրորդ մալորակին է իրեւ երկնային մարմին . ուստի հարկ է, որ Փայլածուի եւ Արուսեկի մանրամասն նկարագրութենէն յետոյ երկրի հողովական և թաւալական շարժումները, իւր ձեւը, բուն տարածութիւնները և բնական ընդհանուր կազմութիւնը քննեմք եւ ստորագրեմք : Երկիրը միջոցին մէջ առանձինն ըլ շարժիր, այլ իրեն հետ կը ձգէ Լուսինը, որ իւր շուրջը կը դառնայ, ինչպէս ինքը արեգական շուրջը . ուստի երկրի նկարագրութենէն յետոյ Լուսոյ վերայ եւս պիտի խօսիմք, որ արեգակնային աշխարհը կազմող աստեղաց մէջ ամենածանօթն է մեղ իւր մէրձաւորութեան պատճառաւ :

Եթէ երկիրը կը շարժի միջոցին մէջ երկինքը զարդարող անթիւ աստեղաց նման, ամենէն առաջ այս խնդիրը կը ծագի, թէ իրեն ամենամերձաւոր երկնային մարմնոց ինչ աեսքով կ'երեւի . տոիկոյ կախումն ունի գիտողի հեռաւորութենէն : Երկիրը գրեթէ գնտակերպ է, որոյ մէկ մասը արեգակին կը լուսաւորի և միւս մասը մի և նոյն ատեն մթութեան մէջ կը մնայ : Արշափ հեռանաց արեգակին, այնշափ փոքր կ'երեւի սկաւառակի ձեւով և փոքրիութեան համեմատ իւր լոյն ալ կ'առաւելու . որովհետեւ արեգական լոյնը որ կ'անդրադառնայ դիասողին երկիրի լուսաւորեալ կիսագնոտէն, կեզրոնացած պիտի երեւի եւսքան զեւս փոքր մակերեւոյթի մը վերայ . Վերջապէս ինչ լուսներեւոյթներ, որ Փայլածուն եւ Արուսեակը կ'ընծայեն մեղ, նոյնը

պիտի ընծայէ երկիրը մոլորակի մի մի չէն գիտողին .

Լուսնոյ մէջ գիտող մի ենթադրք երեմք . երկիրը այս գիտողին պիտի երեւի լուսաւոր սկաւառակի ձեւով , որուն վերայ ձեւով և մեծութեամբ տարբեր շատ բծեր պիտի տեսնուին . ցամաք մասուրը փալուն բծերու տեսքը պիտի ընծայէն , ծովերը՝ միթին բը ծերու , բեւեռաց մշանջնական սառոցիները ու ձիւները աւելի ձերմակ պիտի տեսնուին . իսկ մթնոլորտի ամպերը իբրեւ շարժուն բծեր , Գարձեալ մի և նոյն գիտողը երկրի երեւութական տրամագիծը Լուսնոյ տրամագիծին չորս անդամէն աւելի պիտի տեսնէ . Եւ հետեւաբար երկիրը իւր լուսն ժամանակ տասն երեք լը բացեալ Լուսնոյ բովանդակ մեծութեամբ և տաւած լուսով պիտի երեւի : Եմէ գիտողին հեռաւորութիւնը Լուսնոյ երկրէս ունեցած հեռաւորութեան չորս անդամը սեպեմք , այն ատեն երկիրը լուսնոյ մեծութեամբ պիտի երեւի և ինչ համեմատութեամբ որ հեռանայ գիտողը՝ մի և նոյն համեմատութեամբ պիտի փոքրանայ երկրի տրամագիծը և իրբեւ ասող մի պիտի փոյի երկնակամարին վերայ :

Երկրի միջոցին մէջ ըրած շարժումներէն ծագած առաջին խնդիրը այս պէս լուծելին յետոյ անցնիմք նորա ձեւոյն և իրական տարածութեանց : Այս մասին գիտութեան ապացոյցները զորս ամեն որ գիտէ , չեն հիմնուած պարզ նմանութեանց վերայ , այլ զգալի փարձեր կը հաստատեն նորա միջոցին մէջ առանձնութիւնը և կը ձեւը . և ծայրագոյն ճշգութեամբ կատարուած երկրաշափական հաշվւներն ալ անոր իսկական տարածութիւնները կը հաստոտեն : Սակաւ ինչ այս տարբեր կէտերուն վերայ խօսիմք :

Ամեն գիտող մարդ գիտէ , որ ընդարձակ գտշափ մէջ հորիզոնը շրջանակածեւ կը աեսնուի տարածուած գիտողին չորս կողմը . եթէ տեղափախի գիտողը , նոյնական կը աեղափախի հորիզոնը , բայց իւր ձեւը նոյն կը պահէ երբ լեռներ և մասնաւոր բարձրութիւններ տեսութիւնը չը խսփանեն . ծալուն մէջ հորիզոնին ձեւը աւելի պարզ է : Ասիկայ երկրի կլորութեան մի ապացոյց է . որովհետեւ միայն գունուն է , որ միշտ մեր աջաց բոլորակածեւ կ'երեւի ինչ որ լինի արտաքին տեսութեան կէտը , ուստից որ կը գիտուի : Կարելի չէ ըսել , որ հորիզոնը կը ձեւանոյ մասնաւոր տեսութեան մի սահմանով և այս է պատճառը , որ անսոր շրջանակածեւ գծի մը երեւոյթը կը տայ . որովհետեւ հորիզոնի բոլորակը կը մեծնայ , եթէ գաշտին մէջ կեդրոնաձգական ուղղութեամբ բարձրանամք :

Ծովերու մակերեւոյթին կորութիւնը աւելի զգալի ապացոյց մի է երկրի կլորութեան : Ընթագրեամք մէք զմէղ ծովեղերքը մի բարձր աշտարակի ծայրը . հորիզոնին վերայ մի նաև կ'երեւի , բայց ոչ ամբողջ , կը տեսնեմք միայն կայմերուն բարձր մասը և վերին առագաստները . ստորին առագաստները և նաւուն ստորին մասը չերեւիր . հորիզոնի ետեւի կողմէն տակաւ առ տակաւ կը բարձրանայ նաւը և ամբողջ տեսանելի . կ'ըլլայ Մի և նոյն երեւոյթը կը պատահի նաւուն միջին գիտողի մը . նախ ցամաքին վերայ եղած բարձր աշտարակներուն կատարները , յետոյ անսնցմէ խննարհ բարձրութիւնները և հուսկ ամենոյնի ամբողջ նաւահանդիստը : կամ բաղաքը կը աեսնուի :

Յիշմէր երկու ապացոյցներ եւս տարբեր կորդի , որք առ աջններէն

աւելի յանկառացիչ են : Ովկ կը կասկածի երկրի կը դրութեան և միջոցին մէջ նորա կղզացման մասին յետ այնքան շըջանաւորդութեան (1), որք աեղի ու նեցան եւ մինչեւ ցորոր կ'ունենան երկրի շարքը ամեն ուղղութեամբ : ու կը կասկածի յետ հաստատութեան օրական շարժման աստեղաց, որք հորիզոնին մի կողմէն կը մտնեն և քսան ու չորս ժամէն զինի հակադիր կողմէն կ'ելլէն :

Երկնակամարին հիւսիսային կիսագունսի աստղերէն մին, ինչպէս է բեւեւական աստղը, ամեն ոք դիմէ, որ գրեթէ անշարժ է և հօրիզոնէն միշտ մի և նոյն բարձրութիւնը ունի որոշեալ գերբի մը մէջ : Արդ՝ եթէ մէկը ուղղակի դէպ ՚ի հարաւ ճանապարհորդէ, այս աստղը հետզհետէ կը ցածնայ, ընդհակառակն կը բարձրանայ, եթէ դէպ ՚ի հիւսիս յառաջ երթայ, այս երեւոյթը երկրի մակերեւոյթին կարնթարթութեան հետեւութիւնն է : Եւեւեւական աստղին բարձրութեան այս փափոխութիւնը կարելի

չէ հոմարել իրրեւ արգիւնք դիտու զին աստղին հեռանալուն, կամ անոր մօտենալուն, որովհետեւ աստղը այնչափ հեռու է երկրէն, որ ճանապարհորդին աեղափախութիւնը այս հեռաւորութեան նկատմամբ իմաստ անհշան է : Իսկ եթէ դիտողը փոխանակ հիւսիսէն դէպ ՚ի հարաւ, կամ հարաւէն դէպ ՚ի հիւսիս ընթանալու, արեւելքէն դէպ յարեւմուտս ընթանայ, բեւեալ շարժական հօրիզոնին նկատմամբ երկնից մի և նոյն կետին վերայ պիտի երեւի և հօրիզոնէն մի և նոյն բարձրութեամբ : Բայց այն տանեն միայն այս տարբեր երեւոյթը պիտի պատահի, այն է, աստեղաց ելլելուն և մտնելու ժամերը պիտի փոխի իմին և ասիկայ անպատճառ պիտի ըլլայ, քանի որ ամեն օր իւր տրամադին միայն վերայ կը հոգովի (1) : Վերջապէս

(1) Նախընթաց ծանօթութեան մէջ ըստիք, որ երկիր կը դրութիւնը և միջոցին մէջ առանձնութիւնը այսօր անհակառակելի իրողութիւններ են : Բայց որչափ որ կան մարդիկ այս ճշմարտութիւններն ընդունազ իրեւ գիտութեամբ ապացուցեալ անհերթէլի ճշմարտութիւններ : այլ սովորյան կան շատերն են, որ առանց կարելի առաջան միերայ ճշգրիտ գաղափար չենին : Առանք միքնին կը հարցնին : ինչպէս կարելի է, որ երկրը միջոցին մէջ առկա կենաց առանց յենարանի : և ինչպէս անոր մակերեւոյթին վերայ բնակիչները եւ առարկաները հաւատորեկը առաջան մէջ կը մնան զնաի ենից վերայ և պահն կազմը : Այս առարկաներները, զբար շատ գեւարին և ուսողական և ընացիսական ուսմանց անհման մարդկանց մորթեն քերել, յառաջ կը գտն մարմնոց անկման վերայ սիստ զարգափար ունենալին :

ինչ է անկումը : — այս երեւոյթը երկրի մակերեւոյթին վերայ շատ պարզ հաշմակարութիւն ունի : Մի ծանր մարդին զնիքը շրջապատղ օգոյ ծաւալէն եթէ առեւ կը լուս : ձգուելով՝ վերեն ՚ի վար կիւնայ տեղւոյն կեղրմահայեցին ուղղութեամբ : Այս շարժման օրենքները յայտնի են և մարմնոց անկումը յառաջ կը գտյ երկրի զանդուածին անփոփոխ ներդրութենէն, որ երկրի մակերեւոյթին վերայ և անկէ գուրա եղած մասմինները դէպ ՚ի կեղրմնը կը ծգէ : Մի և նոյն զրութիւնն է, որ Ուշի կիւնու ջերը եւ մինուրբայ հասանուու խաւերը

(1) Երջանաւորդութիւնը առաջն անդամ փորմութիւնի անուանի նաւորդ ֆերաբինանդ Մակերեւոյթը ըրաւ : Սա 1519 Սեպ. 20ին նաև մուս փորմուգալի մէկ նուռհանդուտէն և դէպ յարեւմուտը արև երթալով ելաւ նոր գտնուած ամերիկան ցամացին վերայ : Խոր ճանապարհը շարունակելու համար ունցը ըստ գտնելով Ամերիկայի ամենա ուղղաթեամբ դէպ ՚ի հարաւ ճանաւեց : ուր վերջնակես նեղուց մը գտնեւցվէ, որ այժմ իւր անուանը կը կաշուի : շարունակեց ճանապարհը դէպ յարեւմուտը, կորեց անցաւ Հարուային ծովը և Փիլիպիանց արշակնականին մէջ մեռաւ : Նաւը շարունակեց իւր ընթացքը և Եւրոպա մուս իրեւ արեւելքէն եւ կող և այսպէս երկրային գունափառ ամբողջ շըջանը լուսացուցութիւնն առանձնութիւնը ուղղութիւններ շատ եղան, որք երկրին՝ միւս մարդակաց հետ ունեցած նմանութեան նոր առաջացները յառաջ բերին :

Հումանոյ խոռոքարմանց ժամանակ երկրի ձգած բաղադրական ստուերն ևս ապացոյ մի է մեր մոլորակին կը ըստութեան . ուրախիտեւ գնառակերպ մարմիններն միշայն կը օտուեր կը ձգեն :

Այս ամեն ապացուցները միայն երկրի գնառամեւութիւնը կը հաստատեն . բայց անքառաշախան են ձշդապէս այս ձեւը հաստատելու : Արդեօք երկրը կատարեալ գնանու մ'է ՚ի բաց առեալ լերանց , բլրոց և այլ բարձրավանդակիներու խորդաբորդութիւնները . ինչ են իրեն բուն տարածութիւնները :

Սայն վերջին կարեւոր խնդիրը լուծելու համար ՚ի վաղուց անտի երկիրը կատարեալ գնառակերպ կ'ենթադրը բեն , որով մէն մի միջորէական , որ երկրի մուկերեւոյթին վերայ ըեւեռներէն անյնուշ մուտացին գիծ մ'է , կ'ըլլոյ մի շրջանակ : Այս շրջանակին բովանդակէ երկայնութիւնը գտնելու համար բաւական է չափել սարա որ և իցէ մէկ ազեղը , օրինակի համար մէկ ասորիմունի ազեղ մի ։ Հիները այս փորձը ըրած են , ինչպէս Երաթոսմէն՝ Ոիէնի եւ Աղէքսանդրիոյ լոյնութեան տարբերութիւնը չափեց և այս երկու բաղաքաց ծանօթ հեռաւորութենէն երկրի ամբողջ շրջապատին որբանութիւնը 250.000 ասպարէզ դտաւ , որ գրեթէ 45 միլիոն մեղր կ'ընէ : Փոսի տինիւս և Պալոմէսս սակաւ ինչ տարբեր դտան Մօտ ժամանակաց մէջ ֆէրնելքիւթիւնը 1550ին առաջննն եղաւ , որ միջորէականի աստիճանի մը երկայնութիւնը չափեց : Աս իւր կառքին անւոյց միոյն ափոց համարիւ (1) (compteur)

այնպիսի հաւասարակութեան մէջ կը պահպան ու որ ծովք . ցամաքները և ողբ՝ երկրի ներքին խռուերն են կը միշադրուած կը ձեւացնեն :

(1) Համարիւ մեքենական գործի մ'է : որով կը չափեն թաւառամերու և կամ երթեւեկութեանց ժամանակները :

մը և քալեցնելով Ամիէնի և Փարիզի միջեւն եղած հեռաւորութիւնը՝ մէկ աստիճանի երկայնութիւնը 57.070 լուսական գտաւ :

Մեելիւս 1615 ին միջորէականի մը ազեղը չափեց արդի գործ դրուած միջոցւ : Այս միջոցն է չափել մեծ խնամով մի խարիսխ , կամ երկրի վերայ հորիզոնական ուղղութեամբ քաշուած մի գիծ՝ համարելով զայն իրբեւառաջն եռանկեան մը կողը . եռանկեան անկիւնները կը չափեն աստիճանաւորեալ շրջանակով և ձեւացնելով այսպէս յաջորդաբար եռանկեանց մի շղթայ ամենն ալ իրարու հետ միացած միջորէականի ուղղութեամբ : Երբ այս ամենն եռանկեանց գլխաւոր մասերը կը չափեն՝ հաշըով կը գտնեն միջորէականի յաջորդական մասերը , որ եռանկեանց միջէն կ'անցնի . ուստի և միջորէականի ազեղը կը պարփակի եռանկեանց շղթային երկու ծայրի կայաններուն միջեւը :

Փիգարու 1769 ին աստիճանի մը երկայնութիւնը 57060 լուսական գտաւ չափելով Մալուազէնի և Ամիէնի միջեւն եղած եռանկեանց շղթայն : Պուհէր , Լազմնատամին և Գոտին չափեցին բերուի մէջ հասարակածի քովերը . մի և նոյն ժամանակ Մոփէրմէիւս ալ Լարսնիի մէջ չափեց . Տալանպէր եւ Մրէն Փարիզի միջորէականին Տունքերի և Պարսելոնի միջեւն եղած ազեղը չափեցին . իսկ Արակո և Պիտգաւելի յառաջ գնացին , որովհետեւ Փարիզի միջորէայն մինչև Պալէարեանց արշակեղագոսին Ֆորմանգերա կրպէն չափեցին . վերջապէս այս կարգի շատ աշխատութիւններ եղան այն տաենէն ՚ի վեր և տակաւին կ'ըլլոն զանազան տեղերու մէջ :

Այս բաղմաթիւ չափերը մէկ նըւպատակի կը ծառային , կամ մի և նոյն

բանք կը հաստատեն, այն է թէ՛ մի և
նոյն միջորէ ականի տարրեր աստիճան
ները հաւասար չեն երկայնութեամբ
եւ հետեւապէս երկիրը կանոնաւոր
գնտակերպ չէ: Աստիճանաց այս տար-
րեր երկայնութիւնները հասարակա-
ծէն սկսեալ դէպ ՚ի բեւեռները շա-

րունակ կ'աճին, ինչպէս կ'երեւի հե-
տեւեւաղ պատկերէն, որոյ մէջ նշանա-
կուած են տեղերը, ուր չափած են,
լոյնութեանց տարրեր աստիճանները
և մէկ ասախճանին մեղրական երկայ-
նութիւնները:

Տեղեր

Լայնութիւնք

Աստիճանի մք երկայնութիւն

| | | | | |
|---------------------------|------------------|-----------|---------|-------|
| Բերու | $1^{\circ} 31'$ | | 110.582 | Ա-71. |
| Պենկալա | $12^{\circ} 32'$ | | 110.631 | |
| Արեւելեան Հնդ | $22^{\circ} 73'$ | | 110.668 | |
| Գաղղիա և Սպանիա | $46^{\circ} 8'$ | | 111.143 | |
| Անգղիա | $52^{\circ} 2'$ | | 111.224 | |
| Ռուսիա | $56^{\circ} 25'$ | | 111.360 | |
| Լաբոնիա | $66^{\circ} 20'$ | | 111.477 | |

Աստիճանաց երկայնութեան այս օ-
րինակ ամռումէն կը հետեւի, որ երկիրը
բեւեռներուն վերայ Ճնշուած է, այ-
սինքն միջորէ ականները փոխանակ բո-
լորակի շրջանակներ ըլլալու, կոր դժեր
են, որոնք աւելի ձուածեւի մատ են:
Բեւեռներու դիմը, կամ երկրի ա-
ռանցքը այս ամեն ձուածեւ միջորէ ա-
կանաց ամենափոքրիկ տրամագիծն է.
իսկ ամենամեծ տրամագծերը հասա-
րակածի այլ և այլ շառաւիզները կը
ձեւացնեն: Ըստ Պէտէլի և Երի հասա-
րակածին շառաւիզն է 6377, 3 հազա-
րամետր: իսկ ըստ Երիշտութեանց դարէ 712
րութեան Դիւնկն՝ 6378.2. բեւեռական շա-
ռաւալիզն չափն է ըստ առաջնոց՝ 6356.1
հազարամետր: իսկ ըստ վերջնոցն
6356.6. կը հետեւի այս թիւներէն, որ
իւրաքանչիւր բեւեռի Ճնշուն է 21 հա-
զարամետր: այս է նաև հասարակածի
ուռեցքին չափը:

Ահա այս է ամենամեծ անհաւասա-
րութիւնը, որ երկրի գունաը կատա-
րեալ գունաէ մի կը տարրերէ: Բեւե-
ռաց Ճնշման վերայ Ճշշտ գաղափար մի
ունենալու համար, երկիրը մէկ մեդր

տրամագիծ ունեցող գունա մի ան-
թագրեմք, այն ատեն բեւեռաց ճըն-
շումը պիտի ըլլայ 16 բիս բորդամեդր:
տեսութիւնը այսքան անշան տարրե-
րութիւնը երբէք չը պիտի որոշէ: Այս
հաշուով ի՞նչ պիտի ըլլան լեռներէն և
ձորերէն յառ աջ եկած անհաւասարու-
թիւնները. ի՞նչ պիտի ըլլան ցամոքաց,
ծովերու մակհաւասարութենէն վեր
բարձրացած մասերը, Գենշիւնմինկա
և Գորեզանքար, Նիւմալայու շղթային
այս տիտանները, որ երկրագնակի ծա-
նօթ լերանց ամենաբարձր լեռներն են,
մէկ մեդր տրամագիծ ունեցող գնուի
մը վերայ եօթը տասնորդ հազարորդ
դամեդր բարձրութիւն պիտի ունե-
նան: Սպիտակ լեռը մէկ երրորդ հա-
զարդամեդրէն քիչ մը աւելի: միջն
բարձրութեամբ շղթայնները, բլուրնե-
րը և ձորերը բողըրովին աննշմարելի
պիտի ըլլան: Ովկիանու ամենամեծ խո-
րութիւնները մէկ հազարորդամեդրէն
երբէք աւելի չի պիտի ըլլան: իսկ հա-
մատարած օդը պիտի ձեւացնէ 5 հա-
զարօրդամեդր բարձրութեամբ մի
պատաստ: Եատ անգամ երկրի մակե-

բեւութին անհաւասարութիւնները նարնջի կեղեւին խորդաբորդութեան հետ կը բազգատեն . բայց այս բազգատութիւնը շատ անհեթեթէ , ինչպէս վերի համեմատութենէն կ'երեւի որովհետեւ մեր գունաը եթէ նարնջի մեծութեամբ երեւակայեմք , անոր վերայ երրէք զավիտի տեսնուին ոչք բարձրութեանց , ոչ խորութեանց , ոչ ճնշման և ոչ ուռեցքի հետք մի :

Երկրաբաշխական բազմաթիւ շափեր երկրի ձեւոյն մասին ուրիշ անհաւասարութիւններ յայնեցին , որք են նորա ձեւաձեւ միջորէսկանաց իրարու հետ ունեցած անհաւասարութիւնները , և իւրաքանչիւր բեւեռին անհաւասար տափարկութիւն : Գոլով հատարակածնի , մինչև հիմա շրջանակած կ'ենթադրէին , բայց ձուաձեւ մ'է , իւր մեծ առանցքը 12.756.5 հազարամետք է . իսկ փոքր առանցքը 12.753.5 որոց տարբերութիւնն է 3 հազարամետք . հետեւաբար երկիրը տնկանոն ձուաձեւ մ' է երեք անհաւասար առանցքներով :

Երկրի կազմութեան , գետնի արտաքին կերպարանաց , ջրոյ և ծովերու հօսանաց , մմժնողորտի ընդհանուր երեւութիւն , երկրի արտաքին կեղեւի և ներքին կուտի երկրախօսական կողմութեան հետազոտութիւնը մարդկային ընկերականութեան ամենամեծ օգուտներ կ'ընձեռէ : Յիշեմք միայն այն կարծիքը , որ այսօր ընդհանորապէս ընդունուած է , եւ այս մեր մղորակի նախնական վիճակի հեղուկ ըլլալու կարծիքն է , որ իւր ստուգութիւնը այս հետազոտութեամբք կը հաստատուի : Եւ արդարեւ մէքենական օրէնքները կը ցուցնեն , որ մի հեղուկ զանդուած , երբ հողովական շարժման կ'ենթակայի , կը ստանայ գնուակերովի մը ձեւը :

(Նորոշակել :

Նոր աստղ Կարապ համաստեղութեան :

Անցեալ տարւոց նոյեմբեր 12 ին իրիկունը յամը շին միջոցները Աթենքի դիտարանին տեսուչ Պ. Սմիթ Կարապ համաստեղութեան մէջ նոր աստղ մի տեսաւ , որ աստղագիտական ոչ մի ցուցակի մէջ կար : Այս աստղը , որ երրորդ կարգի աստղի մը պէս կը փայէր , աստղագիտաց նախկին զիտողութենէն վրիառող աստղ մի չէր , այլ եթէ կարելի է ըսել , նոր աստղ մի եր , որ երկնակամարին իրեւենոր զարդ կաւելնար . անոր համար « Եթէ կարելի է ըսել » յաւեցուցինք , որովհետեւ կրնայ ըլլալ , որ իւր լցոր շատ տարիներէ ՚ի վեր սկսած էր : Արեգական , կամ աստեղաց լցոր մէկ երկվայրկենի մէջ 75.000 մղնն տեղ կընթանայ , և որովհետեւ աստղերը երկրէս շատ հեռու են , ուստի իրենց լցոր մեզ հասներու համար շատ տարիներ կուզեն : Թերեւս Կարտապի նոր աստղն ալ այն շափ հեռի է երկրէն , որ մեզ տեսանելի ըլլալէ տասը , երեսուն և աւելի տարիներ առաջ սկսած է երկնային լուսաւոր մարմնոց մէջ մտնել :

Երկնակամարին վերայ նոր աստղի մը երեւու մը նոր բան չէ . աստղագիտութեան պատմութիւնը այսպիսի շատ երեւոյներ կը իշէ , առանց հաշուի առնելց անոնք , որք վրիսած են աստղագիտաց ուշադրութենէն , որովհետեւ առաջ այնշափ յառաջադիմած չէր այս գիտութիւնը և աստղագիտքը չունեն այն միջոցները , որով և գիտութիւնը զոր այժմ ունին 1572ին , ըստ հին տօմարի Հոկտեմբեր 29ին , այն է Ա. Բարդողիմէսափի կոտորածին դիշերը . Կասիոպէի համաստեղութեն մէջ փայլուն սատղ մի երեւեցաւ , որ մի քա-

Նի օրուան մէջ երկնից բոլոր աստղերը
նույնացուց իւր պայծառ փայլունու-
թեամբ ժամանակի աստղագուշակնե-
րը ըսին ասոր մասին թէ՝ այն աստղն էր
որ մոգերուն առաջնորդեց ՚ի թեթլե-
հէմ. և թէ նորա վերերեւումը յայտ-
նութիւն մի էր աշխարհի կատարածին
եւ վերջին դատաստանի ժամանման .
ամբողջ մէկուկէս տարի երկնակամա-
րին վերայ փայլելէն յետոյ չիջաւ, և իս-
պառ աներեւոյթ եղաւ, բայց աշ-
խարհ չքվերջացաւ . Հետեւեալ դա-
րուն մէջ, 1604ի հոկտեմբերին, Օձա-
կալ համաստեղութեան մէջ նոր աստղ
մի երեւեցաւ, ոչ նուազ պայծառ
քան զառաջինն . գրեթէ փայլուն էր
Արուսեկին չափ, որ բոլոր մոլորակ-
ները կը գերազանցէ, հետզհետէ իւր
լոյսը նուազեցաւ և 1606ի Մարտ ամ-
սոյն մէջ աներեւոյթ եղաւ .

Երկար ժամանակ երկնակամարին
վերայ փայլող աստղերու այս աներե-
ւութանալը շատ կը սպատմուի : Ուլու-
-Պէտ անուամբ մի թաթար իջան,
որ իւր ժամանակի աստղագէտներէն
էր . կ'ըսէ, որ ծրտ գարու սկիզբը
Պտղոմէսսի ցուցակներուն մէջ նշա-
նակուած շատ աստղեր չէին տեսնը-
ւէր . Գասսինի և Հերշէլ, որք ժամա-
նակաւ մեզ աւելի մօտ են, շատ առ-
տեղաց աներեւութանալը կը նշանա-
կեն : Այս երեւոյթներուն մէջ տար-
օրինակութիւն չկայ, ինչպէս որ չկայ
երկաթեայ հրացեալ գնուի մը պաղե-
լուն, կամ իւղի պակասութենէն ճրա-
գի մը բոցոյն շիջանելուն մէջ . Բայց
եղած են երբեմն աստղահմաներ, որք
առանց աշխարհի կազմութեան վերայ
Ճշմարիա գաղափար ունենալու, ա-
ւելի իրենց երեւակայութեամբ այս
պիսի երեւոյթներուն մէջ ամենասո-
կալի գուշակութեանց առատ նիւթ
գտած են, և ժողովուրդը միշտ դիւ-

րահաւան գտնուելով՝ անմիջապէս հա-
ւատացած է այսպիսի յնորքներուն :
Պոտէն կ'ըսէ, որ 1524ին Գերմանացի
Աթոփլէ աստղահմային գուշակութե-
վերայ Բոլոր Գաղղիական գաւառնե-
րը մի զարմանակի երկիւղով և տիեզե-
րական ջրհեղեղի մը կասկածով պա-
շարուեցան . բայց մեր հայրերը չ'տե-
սան այսպիսի մի բան ոչ պատմու-
թեանց և ոչ հեղինակի մը մէջ : Գլու-
նուեցան շատ դիւրահաւաններ, որք
ազատուելու համար տապաններ չինե-
ցին, թէ և իրենց քարոզուեցաւ Աս-
տուծոյ ուխտը և երդումը մարդիկ .
Ները ջրհեղեղաւ ը ջնջելու մասին :

Փառք գիտութեան, որ այժմ ժո-
ղովրդեան դիւրահաւանութիւնը ե-
թէ ոչ բոլորովին ջնջուծ, գո՞ւ է նուա-
զեցուցած է . այժմ աստղահմայական
բանդագուշանաց դիւրաւ հաւատա-
ցողներ քիչ կը գտնուին, որովհետեւ
գիտութեան հուրը ժողովրդեան մեծ
մասին մորփի նտիսապաշարումները սրր-
բեց և մաքրեց, և եթէ գտնուին ևս,
անշուշա եմք, որ ժամանակը պիտի
լուսացնէ գիտութեան թողած այս
պակասը՝ ՚ի սպառ ջնջելով ամենայն
նախապաշարումն, որ տգիտութեան
ծնունդ է :



ԲԱԱԳԻՏՈՒԹԵԱՆ
ԵԽ ՏԻԵԶԵՐԱԴՐՈՒԹԵԱՆ Վ.ՐԱՅ
ՊԱՐՀ ԽՈՅԱԿՅՈՒԹԻՒՆ

(Եպունակութիւն . տես թիւ 8.)

ԳԼՈՒԽ Թ.

ՄԹՆՈԼՈՐԸ

Օղին գոյնչ .— Օղին երկրիս երեսէն ու-
 նեցած բարձրութիւնք .— Օղին բաղադ-
 րութիւնք .— Թթուածին , փորձեր .— Բո-
 րակածին , փորձեր .— Բնածխական թթ-
 թուառու .— Շան այլ .— Կենդանական զբա-
 շառութիւն .— Բոց .— Անցնչացումն .—
 Տնկական զնչառութիւն .— Ամպեր :

**ՄԱՐԻԱՄ .— Ի՞նչ գեղեցիկ շրջագա-
 յութիւն մ' ըրինք . օդն ամենասպազ-
 մառ է , երկինքը կապցու . Օրիարդ .
 երկինքն ինչո՞ւ կապցու է :**

ՕՐ. ԹԱՅԹՈՒՀԻ .— Տեսած կապցուդ ,
 սկիելի զաւակս , օդոյ մեծ քանակու-
 թիւն մ' է . Երբ միոյն քիչ մ' օդ
 տեսնենք , անգոյն կ'երեւի մեղ և ա-
 հայ այս է պատճառը , որ քու և իմ
 մէջ եղած օդը չես տեսներ , բայց ա-
 նոր գոյութիւնը՝ երեսիդ վրայ կ'ըդ
 գաս :

**ՄԱՅ .— Ո՛չ , օրիորդ , այժմ անոր
 գոյութիւնը չեմ զգար :**

ՕՐ. ԹԱՅԴ .— Բայց և այնպէս օդ կայ .
 Եթէ չես համոզաւիր , հողմահարովդ ,
 կամ թաշինակովդ իրը հողմահար դէմ
 քըդ հովահրէ , օդոյ գոյութիւնը պի-
 տի զգաս : Միթէ շատ անգամ տեսած
 չե՞ն նորածեւ զարդուց խանութներուն
 մէջ ամեն գոյնով շղարշներ (թիւլ) .
 Այս շղարշները պատաստուած ժամա-
 նակ ամենապայծառ գոյներով կ'երե-

ւին . վարդագոյն կամ երկնագոյն . բայց
 երբ վաճառականնը զանոնիք քակելով
 սեղանին վրայ թիթեւակի տարածէ ,
 այս գոյներն այնշափ գունաստ կ'երեւ-
 ւին . որ հազիւ ուրեմն կը նշմարուին :
 Ասմեց պատաստուած ժամանակ կեն-
 գանի գոյներով երեւելուն պատճառը
 շատը մէկ աեզ մի և նցն ժամանակ
 տեսնուիլն է :

**ՄԱՅ .— Արդարեւ ձեր ըսածը ան-
 սած եմ . բայց վատահն էք , որ օդին
 համար ալ մի և նցնը կը պատահի :**

ՕՐ. ԹԱՅԴ .— Կատարելապէս . և մենք
 կրնանք անձամբ հաստատել վայս . Օ-
 րինակի համար գիտեցէք ասկէ այդ
 վարը տեսնուած բլուրը . որոյ վրայ
 ժամ մ' առաջ կը վազվացէք . ուր կա-
 պցու օդը երկիրը կը շօշափէ . հոն ե-
 ղած տեսնեիդ , երբ այդ օդով շրջա-
 պատուած և պարփակուած էք . ա-
 նոր կապցու ըլլալը կը նշմարէիք :

**ՄԱՅ .— Ո՛չ , օրիորդ , անոր կապցու
 ըլլալը չեն տեսներ , բայց այժմ , որ ան-
 կէ շատ հեռու եմ , կապցու կը տեսնեմ
 զայն այն բլուրին վրայ , ուր էի քիչ
 մ' առաջ . ի՞նչպէս կ'ըլլայ այս :**

ՕՐ. ԹԱՅԴ .— Վասն զի քու և բլուրին
 մէջ տեղը շատ օդ կայ :

ՄԱՅ .— Մեր վերեւը շատ օդ կայ :

ՕՐ. ԹԱՅԴ .— Երբէք չեն կրցած բարձ-
 րանալ մինչեւ օդոյ վերջացած տեղը՝
 ո՞չ օդապարփկով և ո՞չ ուրիշ բանով .
 բայց գիտնականները , որ շատ բաներ
 քննած են , կըսեն թէ երկիրը շուրջ 15
 փարսախ կամ 60000 մէջը թանձրու-
 թեամբ օդի զանգուածով մը շրջապա-
 տուած է :

ՅԱԿՈԲ .— Ի՞նչ կ'ընեն օդին բարձ-
 րութիւնը գիտնալու համար , քանի
 որ մինչեւ անոր վերջացած տեղը չեն
 կընար երթալ :

ՕՐ. ԹԱՅԴ .— Անկարելի է ամեն տեղ
 երթալ և ամեն բան տեսնել . բայց

միշտ կարելի է խորհիլ, և այսու կարելի է նոյն խոկ մեր աչքով տեսածի պէս շատ բաներու վրայ տեղեկութիւն ստանալ:

ՅԱԿ. — Ի՞նչպէս :

ՕՐ. ԹԱԴ. — Օրինակի համար, քիչ մ' առաջ, մեր զրջագայութեան ատեն, երբ ուղեցինք գետակին խորութիւնը գիտնալ. չը պարտաւորեց ո՞նք անոր մէջ մտնել, այլ գաւազան մը առնելով զայն ջրոյ մէջ մխեցինք և յետոյ հանելով՝ գիտեցինք թէ մինչեւ ուր թրջած է, և ըստինք գետակին այս շափ խորութիւն ունի:

ՅԱԿ. — Ճիշդ է, բայց օդը գաւազանով չը չափուիր:

ՕՐ. ԹԱԴ. — Տարբեր բաներու համար, տարբեր միջոցներ ՚ի գործ կ'ածուին, օդին երկրիս երեսէն ունեցած բարձրութիւնն ալ չափելու համար միջոց մը գտած են:

ՅԱԿ. — Ի՞նչ միջոց գտած են:

ՕՐ. ԹԱԴ. — Զայն փոքրիկ գործիով մը կը կշռեն, որ օրովով կը կոչուի: Ուրիշ օր մը այս օդաչափին վրայ պիտի խօսիմ ձեզ և սլիտի ըսեմ թէ ի՞նչ պէս կրցոն գործածել զայն մեր գըրխուն վրայ 15 փարսախ օդ ըլլովն եմանալու համար, 15 փարսախ, կը տեսնէք որ բարեբաղդաբար անկէ զբրկուելու երկիւղ չունինք. վասն զի բացարձակապէս պէտք ունինք օդոյ, որովհետեւ ինչպէս առանց ուտելու, նոյնպէս ալ առանց շնչելու անկարելի է մեղ ասլրիլ: Բաց աստի ուտելու համար զանազան նիւթեր կան, մինչդեռ շնչելու համար միմիայն օդ, բայց ինչպէս ըսի պէտք եղածին չափ ունինք. կը նայ ըլլով որ քիչ ունենանք, բայց բոլորովին չունենալու վտանգին ենթարկիլ անկարելի է. վասն զի ամեն օր տունկերն ու մենք ՚ի միասին նոր օդ կը չինենք.

ՅԱԿ. — 0՞գ կը չինենք:

ՕՐ. ԹԱԴ. — Այս, և սլիտի ըսեմ թէ ինչպէս կը չինենք, բայց նախ և առաջ պէտք է գիտնաք որ օդը կազմ' է:

ՄԱՐ. — Օդը կանչ մ' է:

ՕՐ. ԹԱԴ. — Այս, այս օդը, որ այցը խաղաղ է և կապցատ կ'երեւի, այս օդը, որ ամառն զձեղ կը զովացըրնէ և ձմռն կը սառեցնէ. վերջապէս այս օդը, որ ամեն միջոց գտած տեղ կը սպրդի, երկու կաղերու խառնուրդ մ'է. թթուածնի և բորակածնի:

ԹԹուածինը, որ արդէն ջրոյ բազադրութեան մէջ տեսանք, կազմ' է, որ կ'ոգեւորէ, կը կենդանացնէ եւ կեանքը կ'երագէ. բայց եթէ զայն բուլրովին առանձին շնչենք, գլխու սլլուց կը պատճառէ, բողոք գործարանաց այնպիսի բուռն գործունէութիւն մը, այնպիսի գրգռութիւն մը կուտայ, որ ծերութիւնն ու մահն անշուսալի կերպիւ կը փութացնէ: Թթուածինով լի շիշի մը մէջ ատրաչէկ ածուխի մը գրուիլը տեսած եմ, որ ՚ի քթթել ական սպառեցաւ: Նոյնպէս թթուածինով լի ուրիշ շնչ մը մէջ ալ թռչունի մը գրուելը աեսած եմ, որ անմիջապէս սկսաւ բուռն շարժումներ ընել, կ'ոստատէր, թեւերը կը բաղլսէր, գլուխը կը դարձնէր, տեսնել պէտք եր, խղճալի տեսարան, գողցես ջղաձգութիւն մ'էր այս, բայց այս տեսարանը երկար չը տեւեց, նոյնժամայն անշնչացած ինկաւ, խեղճ թռչնիկին բանը բուսած եր, մեռած էր նա:

ՅԱԿ. — Այս կաղը մենք ալ կը շընչենք:

ՕՐ. ԹԱԴ. — Թթուածինն. անտարակոյս, թռչուններն ալ կը շնչեն, երբ բարձակածնի հետ խառնուած ըլլոյ, ամենեւին չը վիսասեր:

ՅԱԿ. — Ուրեմն բորակածինը լու կաղմ' է :

ՕՐ. ԹԱԴ. — Բորակածինը թթուածնի պատճառաւած բուռն գրգռութիւնը կը մեղմէ : Ինչպէս ջուրը գինիին զօրութիւնը կը մեղմէ : Բայց այս բաղ գատութիւնը ամեն մասամբ լաւ չէ : Վասն զի կրնանք զուտ ջուր խմել : Մինչդեռ չենք կրնար բորակածինը առանձինն շնչել : Եթէ զուտ թթուածինը կեանքը խիստ կը փութացնէ : Ընդհակառակը զուտ բորակածինը՝ զայն անմիջապէս կը դադրեցնէ : Վառած մոմ մը և ատրաշէկ ածուխ մը բորակածինովլի չի չի մէջ դրուելով՝ անմիջապէս կը մարին : Վերոգրեալ անգութ փորձին նման փորձ մ' ալ տեսած եմ : Բորակածինովլի չի մը մէջ թռաշուն մը դրին : որ անմիջապէս թը թեցաւ և ննջեց այլ եւս չ'արթնալու համար :

ՄԱՅ. — Ի՞նչպէս այս տեսակ անգութութիւններ կ'ընեն, զանոնք տեսնելու պարզ հաճոյից համար չեն կատարեր այս փորձերը . Եթէ այդպէս ըլլար, արդարեւ չարասրտութիւն պիտի բլլար . բայց ընդհակառակը տեղեկանալով անոր կենդանեաց վնասակար ըլլալ, կ'իմանան զցդ ընդ նմին մարդկանց վնասակար ըլլալ : Այս անգութ փորձերն աններելի կ'ըլլան, երբ օգտաւէտ նորատակ մը չունենան :

Օդին մէջ փոքր և փոփոխական քանակութեամբ ուրիշ երկու տեսակ կազեր ալ կան : այն է ջրոյ շոգի և բնածխական թթուաւաւ :

ՄԱՅ. — Բնածխական թթուաւան բնչ է :

ՕՐ. ԹԱԴ. — Կաղմ' է, զոր բորակածինի նման առանձին եղած ժամանակ չենքնար շնչել : բայց երբ հե-

զուկի մը մէջ պարանակուած ըլլայ, հեղուկին հետ կրնունք խմել առ անց որ և իցէ վեսոփ : Օրինակի համար Նամբանեաց գինեց փրփութին և Սէլցի ջուրին մէջ բնածխական թթուաւաւ կայ : այս է որ խցանները գէտ ՚ի օղը կը նետէ և նոյն հեղուկներուն քիչ մը կծու համ կ'առաւայ :

ՄԱՅ. — Զայն չենք կրնար շնչել :

ՕՐ. ԹԱԴ. — Ո՛չ, երբ բոլորովին առանձին ըլլայ զմեզ կ'անշնչացնէ : կը խղդէ : Վասն զի առանց թթուածին շնչելու չենք կրնար ապրիլ : Նաբօլիի մօտ խոր այր մը կայ, որ Նան այդ կը կոչուի : Վասն զի մարդիկ առանց վնասի կրնան անոր մէջ մտնել : մինչդեռ շուն մը քիչ մը ներս մտածին պէս կը խղդուի, եթէ շուտ մը դուրս չը հանաի :

ՄԱՅ. — Ինչո՞ւ :

ՕՐ. ԹԱԴ. — Վասն զի այս այրին մէջ գրեթէ մինչեւ շան մը բարձրութիւնը բնածխական թթուաւած կայ : Եթէ մարդ մը այս այրին մէջ պառկի, հոն մահող շան մը վիճակը կ'ունենայ : բայց եթէ յոտին կայ, բոլորովին անվնաս կը մնայ :

ՅԱԿ. — Ի՞նչպէս կ'ըլլայ, որ բնածխական թթուաւածն այրին մէջ ամեն տեղ օդին հետ խառնուած չըլլար :

ՕՐ. ԹԱԴ. — Վասն զի բնածխական թթուաւածն օդէն աւելի ծանր կազմէ : ուստի և այս պատճառաւ դէպ ՚ի գետին կը հոսի և հոն կը մնայ, մինչդեռ օդը այրին աւելի վերին մասանց մէջ կը բարձրանայ : Միթէ տեսած չէք այն պիսի կանթեղներ, որոց մէջ ձիթարւող և ջուր կը լեցնեն, բայց ջուրը ձիթարւողին տակ կ'իջնայ և հոն կը մընայ, որովհետեւ ջուրը ձիթարւողին աւելի ծանր է : Զուրը ձիթարւողին աւելի ծանր է, վասն զի իւր մասնիկներն իրարու աւելի մօտ են : ուստի

առվորաբար կըսուի թէ ջուրը ձիթաւ
իւղէն աւելի իփէ է։ Նոյնպէս բնած-
խական թթուուտը՝ օգէն աւելի խիստ
բազով՝ օդին աւել կ'իջնաց, ինչպէս
ջուրը ձիթախւղին տակ։

Ամկայն երբեմն կը պատահի, որ
շատ բնածխական թթուուտ կը չըն-
չէնք, որ առողջութեան խիստ վեա-
ստիար է։

ՄԱՅ. - Ո՞ւր կը պատահի այս բա-
նըս, օրիորդ։

ՕՐ. ԹԱԴ. - Այն ամեն տեղ, ուր
շատ անձինք ընդ երկար փակուած կը
մնան առանց օդի նորոգման հոգ տա-
նելու։ Եւ եթէ այսու հանգերձ նոյն
տեղ շատ լցուեր աղ վառուած ըլլան,
կըսկիին լցուերը մարիլ և անձինք նեղու-
թիւն զգալ. այս անտեղութիւնները
դարմանելու համար պէտք է պատու-
հանները բանալ։

ՄԱՅ. - Ի՞նչո՞ւ լցուերը կը մարին և
ինչո՞ւ մարդիկ նեղութիւն կ'ըզգան։

ՕՐ. ԹԱԴ. - Երբ տարրութեանց եւ ՚ի մասնաւորի
թոյ բազադրութեանց վրայ խօսեցանք,
տեսանք որ թթուածնի նրանի հետ
միանալու ատեն բոց մ' առաջ կու-
գայ. ուրեմն մոմերու և կանթեղինե-
րու բոցն ալ տարրաբանական բա-
զադրութեամբ մ' առաջ կուգայ. օ-
դոյ թթուածնին է որ մոմի կամ իւղի
այրելի նիւթերուն հետ կը բազադ-
րուի. հետեւաբար սենեակի մը մէջ
այնչափ աւելի լցու կ'ըլլայ, որչափ որ
բազադրուող թթուածնի քանակու-
թիւնը մէծ ըլլայ։ Զարմանալի չէ ու-
րեմն, որ երբ սենեակին մէջ այլ եւս
թթուածնին չք գտնուի, լցուերը մարին
և մարդիկ նեղութիւն զգան. վասն զի
առանց թթուածնին շնչելու չենք կը-
նար ասլրիւ։

Ածուիի ակութով (մանկալ) մը
ինքնինքնին մեռցնող անձանց վրայ իս-

ուուիլը շատ անդամ լուծ էք. Ասոնք
իրենց սենեակիլ կը փակուին, անոր բո-
լոր ծակ ու ծուկիրը լոււ մը կը գոցեն.
յետոյ իրենց ակութը կը վառեն, ո-
րով օդին թթուածինը ածուխին հետ
կը բազադրուի և երբ սենեակին մէջ
այս կազէն այլ եւս չը մնար, նոյն ան-
ձինք անշատցեալ կը մեռնին։

Ահա այս է պատճուն, որ հար-
թիչ (իւթիւճի) կիներն միշտ իրենց
դուռները կամ պատու հանները բաց
կը թողուն նոյն խոկ ձմեռը. վասն զի
առանց այս զդուշութեան կը հիւան-
դանան։

ՄԱՅ. - Հիմա կը հասկնամ այդ բա-
նը. բայց ինչո՞ւ համար ո՛չ կրակ և ոչ
լցու վառած սենեակի մը մէջ ալ երբ
շատ անձինք փակուին, օդը շնչառու-
թեան վեասակար կ'ըլլայ։

ՕՐ. ԹԱԴ. - Ենչառութեան տաեն
երկու շարժում կը կատարենք. առա-
ջին շարժմամբ օդին թթուածինը կը
ներշնչենք. կամ պարզապէս ըսելով՝
թթուածինը մեր քթէն ու բերնէն
մանելով՝ մեր թոքերուն մէջ կ'երթայ.՝
երկրորդ շարժմամբ՝ բնածխական թը-
թուուտ կ'արտաշնչենք. կամ պարզա-
պէս ըսելով՝ բնածխական թթուուտը
մեր թոքերէն գալով՝ մեր քթէն ու
բերնէն գուրս կ'ենի. Հետեւաբար
երբ սենեակի մը մէջ բազմաթիւ ան-
ձինք փակուած ըլլան, շուտ մը նոյն
սենեակին մէջ գտնուած օդին թը-
թուածինը կը ներշնչեն և անոր տեղ
բնածխական թթուուտ կ'արտաշնչեն.՝
Հարկ է ուրեմն պատուհանները բա-
նալ, թթուածին ընդունելու համար։

ՄԱՅ. - Օդին մէջ շատ թթուա-
ծին կայ.

ՕՐ. ԹԱԴ. - Եթէ օդով լի շիշ մը
ըլլայ և եթէ այս շիշ հինգ բաժակէն
քիչ մ' աւելի օդ պարունակէ. կ'ու-
նենանք.

4 բաժակի բորակածին

1 բաժակի թթուածին

ընդ տմէնը

5 բաժակի օդ :

Խոկ հայածը կ'ըլլայ բնածիսական
թթուուտ և ջրոց շոգի :

07ին մէջ գտնուած այս վերջին
երկու կազերէն խւրաքանչւրին ճիշդ
քանակիլ շրսելուս պատճառն անոնց
փոփոխականութիւնն է . երբեմն շատ
կը գտնուին և երբեմն քիչ . մինչեւ
բորակածինն ու թթուածինը գրեթէ
միշտ ամփոփոխ համեմտութեամբ
մէկուղ կը գտնուին :

ՄԱՅ. — Ի՞նչպէս կ'ըլլայ որ աւելի
բնածիսական թթուուտ ըստ գտնուիր ,
քանի որ բոլոր աշխարհ շնչառու-
թեամբ՝ անոնդ օգը կը լեցնէ :

ՕՐ. ԹԱԴ. — Աւան զի տունկերն
ալ կը շնչին և . . .

ՄԱՅ. — Տունկերն ալ կը շնչին :

ՕՐ. ԹԱԴ. — Այո , իրենց տերեւ-
ներուն և ճիւղերուն ծակուներով .

ՄԱՅ. — Այն ատեն օդն ալ աւելի
բնածիսական թթուուտով պիտի լենայ
ուրեմն :

ՕՐ. ԹԱԴ. — Բնաւ երբէք , այլ ընդ-
հակառակն անկոց և կենդանեաց այս
շնչառութիւնն օդն անընդհատ կը նո-
րոգէ . սքանչելի երեւոյթ մ' է այս .
ուշադրութիւն , այն ինչ մարդիկ եւ
կենդանիք շնչառութեամբ օդին թթ-
ուածինը կը ներշնչին եւ բնածիսա-
կան թթուուտ կ'արտաշնչին , ընդհա-
կառակը տունկերը բնածիսական թթ-
ուածինը կը ներշնչին եւ թթուածին
կ'արտաշնչին . այնպէս որ մենք տնկե-
րուն օդին մէջ պէտք եղած բնածիսա-
կան թթուուտը կ'արտադրենք եւ
տունկերն ալ մէզ վետակար եղող այս
բնածիսական թթուուտը ծծելով՝ մեզ
օդին մէջ պէտք եղած թթուածինը
կ'արտադրեն (1) :

Ահա այս է պատճառը : որ դաշ-
տորէից օգը մեզ այնչափ լաւ կ'ու-
գայ . և այս կազի փոխանակութիւնն
ու օդի մշտատեւ նորոգութիւնը յո-
րէին անընդհատ կը կատարուի կենդա-
նեաց և անկոց շնչառութեամբ :

ՄԱՅ. — Ի՞նչո՞ւ ցրէին լսիր , միթէ
գիշերը մի և նոյն բանը տեղի չ'ունե-
նար :

ՕՐ. ԹԱԴ. — Ո՞չ , գիշերը տունկե-
րը մեզ նման կը շնչին , այսինքն թթ-
ուածին կը ներշնչին և բնածիսական
թթուուտ կ'արտաշնչին : Ահա այս
պատճառաւ պառկելու սենեկիդ մէջ
տունկեր ունենալը լաւ չէ :

ՄԱՅ. — Ի՞նչո՞ւ համար ծաղկիները
սենեակի մը մէջ երբեմն գլխու ցաւ
կ'ուտան :

ՕՐ. ԹԱԴ. — Վասն զի անկոց կա-
նաչ տերեւներն ու ցողունները ցորե-
կը բնածիսական թթուուտ կը ներշն-
չին և թթուածին կ'արտաշնչին . խոկ
գունաւոր մասերը , որ պատկ կամ
ծաղիկ կը կոչուին , միշտ մեզ նման կը
շնչին , ասկից զատ ուրիշ կազ մ' ալ
կ'արտաշնչին , որ շնչառութեան հա-
մար լաւ չէ :

ՄԱՅ. — Ո՞վ ըլլայ շոգի առաջ կը բե-
րէ օդին մէջ :

ՕՐ. ԹԱԴ. — Քիչ մը մենք առաջ կը
բերենք շնչառութեամբ : Փորձի հա-
մար սա փաքրիկ ամսղը տես , որ երբ
շոգւոյ մասնիկները քիչ մը իրար մօ-
տեցնելու չափ ցաւրոտ ըլլայ : մեր բեր-
նին առջեւ կը կազմուի : Բայց մեր ար-
տադրածը անհշան բան մ' է . օդոյ
մէջ պարունակուած բոլոր շոգին՝ ա-
րեգական ջերմութեամբ երկիրի վրայ
սարածուած ջուրերու շոգիացմամբը
կը կազմուի : Այս շոգին օդէն թեթե

(1) Կենդանեաց շնչառութիւնը՝ ինդուստրիալ շն-


ըլլալով օդին մէջ կը բարձրանայ , ինչ
պէս ձիթափեզը ջրոց վրայ , և ահա՛ այս
շոգիներն են , որ օդին մէջ ամսղեր կը
կազմեն :

ՑԱԿ . — Ուրեմն ամսղերը բոլորովին
օդին վեր կը գտնուին և ամսղերէն ան-
դին ուրիշ բան չը կայ :

ՕՐ. ԹԱԴ . — Ամսղերը բոլորովին օ-
դին վեր չեն գտնուիր . որովհեաեւ ,
ինչպէս արդէն ըսի , երկիրս բոլորովին
օդով շրջապատռած է , որ գրեթէ 15
փարասախ թանձրութիւն ունի : Ուրե-
մին մեր գլխուն վրայ շուրջ 15 փար-
սախ օդ կայ . բայց երկրի մակերեւոյ-
թին մօտ այս օդն աւելի խիտ է քան
թէ այս ինչ բարձրութեան մէջ : Որ-
շափ բարձրանանք , օդոյ մասնիկներն
այնշափ նուազ խիտ կ'ըլլան . ուստի
ջրոց շոգին օդոյ մէջ այնշափ կը բարձ-
րանայ , մինչեւ որ իրմէ թեթեւ օդի
պատահի . Երբ այն բարձրութեան
հասնի , ուր օդին խտութիւնը խր-
տութեան հաւասար ըլլայ , այսինքն
իրմէ նչ աւելի և ոչ պակաս կը է , այ-
նուհետեւ ալ չը բարձրանար :

Այս օդի և ամսղերու զանգուա-
ծը , որոյ մէջ տեղը կը գտնուի երկիրը ,
Մինչըս կը կոչուի :

(Նորանակիւլ :)



ՈՒՂԵԿՈՐՈՒԹԻՒՆ

Ի Սուրբ Եջմիածին , 1876 Յ-ը 20 .

(Հարուակութիւն , անս թիւ 8 :)

Զմոռնանք յիշել իջման տեղը գը-
րուած փառազարդ և մանրաբանդակ
տղիւ փայտէ յօրինուած գմբեթնե-
րով աթոռը զար իննովիկնետիս ծ. Բ .
Հռոմաց պապը ընծայ խրկած է նահա-

պետ Կամողիկոսին Հայոց յամի Տեա-
ռըն 1697 . ինչպէս կը միշէ նաև Հ .
Միքայէլ Չամեան , Հատ , Գ . 725 .
Էջմիածնի Եկեղեցւոյ արեւելեան կող-
մը , գարձեալ Եկեղեցւոյ հետ խառ-
նուած , ջնել տաւած է Գեղրդ Դ . Ա .
Կամողիկոսն երկք պահարան , որ եր-
բեմն թանգարան եւս կ'անուանեն ,
որոյ վերայ երկու գմբէթ կ'ամբառ-
նան , որոց մէջ շարջանակի կարգաւ
շնուած են ապակեփեղի դարաններ ,
և կարգաւ զեաեղուած են եկեղեցա-
կան զգեստք . Արքազան անօմք և մա-
սունք Արքոց ըստ խրաքանչիւր կար-
գի , այլ և այլ տեսակաւ և աստիճա-
նաւ ընտիր և ծանրագին գաւազոնք
և այլ ամենայն եկեղեցական սպասք :
Երրորդ պահարանի մէջ կը տեսնուին
շորս գրասեղանի ձեւ շնուածներ ,
ո-
րոնք ապակի փեղիերսով ծածկուած են ,
որոց մէջ կարգաւ շարուած են ծանրա-
գին խաչեր . հայրապետական պնա-
կիներ , ականակաւու արծուի նշաններ
Ռուսաց կայսերներէն տրուած . կան
0 սմաննեան Սուլթանաց Մէջիակէի ա-
ռաջին կարգի նշանն , և գոհարազարդ
իֆկիւտ նշանի կոչուածը . ծանրագին մա-
տանիներ , տուփեր , ակնազարդ և ժա-
մարարի մարդարտահեռ կամարներ ,
և խառն հին արծաթ և պղինձ դրամ-
ներ , և այլ այսպիսիք որք Եկեղեցւոյ
կը վերաբերին . ասոնց խրաքանչիւրին
վերայ թուանշաններ գրուած են , և
ամբողջապէս ըստ կարգի այբուբենից
երկու տումարի մէջ արձանագրուած
և Վեհափառ Հայրապետէն վաւերա-
ցած , մին վեհարանը կը պահուի եւ
միւսը եկեղեցին , պէտք եղած ատեն
տումարով կը հանեն և գարձեալ տե-
ղը կը գնեն . այս կարգադրութիւնը
խիտա գովելի և ընդունելի եղած է աղ-
գայնոց . զի խափանեալ է կ'ըսէին այն
խաբէական և նախապաշեալ վաղեմի

սավորութիւնը, որ լոկ երդումավ մի աղբային կենաց գոյութիւնը անհատի մը ձեռք կը մատնեէին, որ յետոյ Կոթողիկոս և փակակալ իրենց ախորժակաց համեմատ կը վարուէին, որով այսպահ թանկագին իրեր առանց գիտութեան միաբանութեան և ազգին ՚ի կորուստ կը մատնուէին։ Յիշեալ դարսններուն միոյն մէջ աչքի զարնող և աւելի հետաքրքրական երկու բիւրեղեաց խաչեր կան բաւական մեծութեամբ, և մին աւելի մեծ իրօ կանգնաշափի 18 կոտրէ բաղկացեալ, որոց անուաւոր հաստորները և շերտերը արծաթի գունտերով իրարու ագուցած են, միոյն մէջ տեղը նուոր գրուած մի կը տեսնուի անընթեռնի. այս խաչը Վեհ. Հայրապեար Նոր Նախնշեւանէն բերած է ուրիշ եկեղեցական անօթոց հետ, զոր Նախնշեւանցիք Անի քաղաքէն գաղթած ատեննին հետերնին տարած են, իսկ միւսոյն բնոյն վրայ որ ցողի կամ պատուանդանի վերսոյ կագուցուի գրուած է այսպէս։

Յիշատակ է Ս. Խաչ Յովհաննէս Թագաւորին Հայոց եւ կղկց Շաւշան տէն (արիկնոջն), եւ որդի Աշոտ Թագաւորս բազում զօրօք եկի ՚ի Ս. ուխտա, ետու շամբառ ջաղացներն, երասիսի նաւն, և Աստապատու Հողն Սուրբ նախավիկան, յիշատակ մեղ եւ ծնողաց Թվեն նժե. (966)։

Ինչպէս կ'երեւի արձանագրութենէն, այս Խաչը նուիրած է Յովհաննէս Բագրատունի Հայոց թագաւորի որդին ՚ի յիշատակ հօր իւրց Մաղարթայ ընթիւն նախավիկայ Սուրբ Ստեփաննոսի վանաց, ոչ միոյն այս Խաչը, որ Շահ խաթունեանց կը հաւանի բակը թէ նոյն իսկ թագաւորի գրոշակին վրայ կրած խանէ, այլ և գիւղեր և ագարակներ

՚ի կալուտծ նոյն վանաց, որոց հրավարաւակը, ընդ կոնդակի Խոչկայ Կաթողիկափ կափ կը դնենք աստ ՚ի գիւրութիւն ընթերցողաց, հանեալ յստորագրութենէ Շահիաթունեանց։

Անուամբ անեղին Աստուծոյ Հօր և ՚ի փառս ծնեցելցն ՚ի նմանէ անեղապէս Որդւոյն միածնի, և ՚ի փառս բղնեցելցնէութենէն Հոգեւոյն Ճմարտի։ Այս մեր գիր հոգեւորական բարձր հրամանի հաստատութիւն է եւ օրհնութիւն, ՚ի հոգեւոր հովուութեան Տեառն Խաչի Հայոց Կաթողիկոսի և ըստ մեծի մերոյ Տէրութեան արեւելց և հարաւայնոյ Հայոց թագաւորի Աշոտ յորջործեալ անուամբ բարեպաշտ և մեծ Շահանշահի։ Ես Աշոտ թագաւոր թագաւորաց ամենայն տիճ զերաց եկեալ ՚ի սուրբ ուիւտը Աստուածաբնակ նախավիկայիս հանդերձ զօրօք թագաւորականօքս և իշխանօք, Տեառն Խաչի Հայոց Կաթողիկոսի, երկրպագեալ Սուրբ Տաճարիս Հին Մալովոյ վանից։ Երանելի կրօնաւորս աստուածամեծար մեծանուն Տէր Բաբկեն Հայկաղն նախաշենող և ՚ի Քրիստոս ծնող հոգեւոր գառանց մանկանց եկեղեցւոյ եղեւ ձեռնադրեալ արք եպիսկոպոսապետ ՆԻԵ. (976) տումարիս Արամեան մնացուածիս եղեւ կատարումն շնութեան և նորոգման աստուածաբնակ սուրբ նախավիկայիս, ջանիւք և աշխատութեամբ Տեառն Բաբկենի, որ էր սա շնեալ սուրբ Առաքելցն Բարգուղիմէոսի և Թագէոսի։ Եւ ՚ի սուրբ տաճարիս կոյ հանգուցեալ սեւեռեալ բեւեռն բազկացն Ցիսուսի, եւ յարբայական թագից փուշ պասկէն ճուղ մի, և Քրիստոսի ձեռաց Գ. հատմանանայն եւ բազմահաւաք սրբութիւնքս, որք աստ կան հաւաքեալ ։ Եւ ետու հնձեքս և հայրենիքս և գաս-

տակերու և ընծայան հին Մազարթայ վանից սուրբ Ստեփաննոս նախավիտ յին, Տիրամայր Աստուածածնին եւ սուրբ Գէորգ գօրավարին անդառնալի և բարձր հրամանաւ մերով՝ թեմ և վիճակ, որ և սահմանեալ էր ՚ի նախ նեաց մերոց և ՚ի սուրբ Հայրապետացըն մերոց Տեառն Ներսիսէ թուին մերոց սուրբ Լուսաւորչին, նախ և առաջին հոյակապ և հռչակաւոր մայրաքաղաքն Նախջռւան կոկ (կոդ) գաւառն բոլորովին, Խոյ, որ է Զարեւանդգաւառն և ամենայն վիճակ իւր բոլորովին մինչ ՚ի նուան ՚ի Պարատարան, որ բաժանի ՚ի Մալամաստայ, ՚ի յԵրասխայ մինչ ՚ի Մարտնդայ դրիւէն, Մարտնդ իւր վիճակովին, Եիրինթալի իւր վիճակովին գեայ մինչ ՚ի դղեակն Խոսրովու ՚ի Յաղատ և ՚ի Գիրան. ՚ի ջուղաց և իւր վանքն. յԱստապատ և իւր վանքն, ՚ի ջաղաց տեղն և իւր վանքն, յարաբք և իւր վանքն . . . տուաքընծայ և հայրենիք անդառնելի և բարձր հրամանաւ մինչեւ ՚ի գալուստն Քրիստոսի և ահեղ գատաստանն, և մի ոք իշխեսցէ ՚ի մեծաց և ՚ի փաքունց արդիւլ առնուլ . . . Եւ աւարտումն եղեւ բանիս և գրիս ձեռամբ մեծանուն Տեառն Խաչկայ կաթողիկոսի ամենայն Հայոց և Տէր Բարիկենի և մեծ իշխանացն Ապղարիսի իշխանին . . . Եւ Հայոց Վասակ իշխանին Սիւնեաց Գրիգոր իշխանին Ըռշտունեաց, Գէորգ իշխանին Գնունեաց, Եազուհ իշխանին Արծրունեաց, նամակիս և Սիկիս կատարիչըն օրհնին յԱստուծոյ և յամենայն սրբոց, խափանիչըն դատին ՚ի Քրիստոսէ Աստուծոյ մերոց, որ է օրհնեալ յաւիտեանս ամեն.

Տէր Խաչիկ Կաթողիկոս ամենայն Հայոց և Պատրիարք արեւելեան տանըս, առաքեցաք գրաւորական օրհնութեան հրամանաւս զմեծանուն եր-

շանիկ Տէր Բարիկ Ոքքեպիսկոպոսն գալ առ ձեզ և Առաքելաբար շրջիւ ՚ի միջի ձերում, վարդապետել, խրատել և ուսուցանել յօրէնս և ՚ի պատուիրան Տեառն . . . լինել ացիլուսրոց և այրեաց, և կարօտելց կարեկից սիրովն Քրիստոսի, կոշեացէ զորժանաւորս և զիմաստունան ՚ի կարգ և յաստիճան կիսասարկաւագութեան, Սարկաւագութեան եւ Քահանացութեան, կացի և հրամանաւ մերով ՚ի վերաց ձերոց իշխանութիւն Առաքելական կապել և արձակել յերկինս և յերկրի . . . Ա. յլ և կանոնեալ հասս և զիրաւունս զոր և պարտիք տալ Աստուծոյ, բամին Ամուս, Տեառնականս, զնաչօրհնեան և զորբանուէրս, զիրաւունս մատաղաց, կենդանեաց և ննջեցելոց բազմական սըն, զյանկարծամահ և զառակամահ, և զամենայն իրաւունս կենաց և մոհուլիով անթերի տուք ՚ի ձեռս դորազուարթ և աւատ սրտիւ . . . Ենորհեցաք ՚ի ձեռս դորա ձեզ պարզեւս հոգեւորական վիւլն օծութեան սրբալցոս նորածնելցին աւազանաւ յորդէգրութիւն Հօրն երկինաւորի եւ ՚ի յառանդակցութիւն Քրիստոսի Աստուծոյ յուսուցին մերոց, զնոյն ՚ի ճակուալն նշան հաստատութեան, յօծումն Քահանացութեան ՚ի նորոգութիւն Ա. Եկեղեցւոց Քրիստոսի Աստուծոյ մերոց որ է օրհնեալ յաւիտեանս ամեն.

Գրեցաւ ձեռամբ Ագաթանկեղ դորի նին (976) տումարի Արամեան մասցուածիս :

Խաչիկ ծառայ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոց, շնորհօք և սղորմութեամբ նորին Կաթողիկոս ամենայն Հայոց :

(Եազուհ իւլիուս :)

ԳԱՐՉԵԱԼ
ՆԵՐԻ ՔԻՆ ԾՈՎ

Սերբին ծովու մասին յուղուած խնդիրը վերջանալէ շատ հեռու է . զրեթէ Ակադեմեայի ամեն նիստերուն մէջ անդամներէն մին Պ. Բուտէրի խորհուրդը կը քննադատէ . վերջին անգամ՝ Պ. Կոսէն անունով մէկը նոր առարկութիւն մը հանեց , զոր մեր ընթերցողաց կը հազարդեմք կրկին նորատակաւ . նորմ՝ իբր ուսումնական հետաքրքրական խնդիր , երկօրդ՝ իբրեւ քննադատութեան կամ միջաբանութեան օրինակ , որ մեր մէջ դժբաղդարար ընդհանրապէս անուանարկութեամբ կ'սկսի և անուանարկութեամբ կը վերջանայ :

Պ. Կոսէն կ'ըսէ , ենթադրեմք , որ գործը ՚ի կատար ելած է , բոլոր աշխատութիւնները իրենց նպաստակին հասած են , Շօթերը մինչեւ իրենց եզրները ջրով լեցուած են , իրենց աշխերը արագապէս թրջուած , նոյն իսկ առապարները կարեւոր խորութիւնը ունին , և նաւարկութիւնը սկսած է . բայց իրաց այս վիճակը ո՞րչափ ժամանակ սկսի տեսւէ , ահա այս է կարեւոր կէտք :

Խնչակէս ամեն ծովեր , մեծ և փաքր , նայնպէս այս ծովը պիտի ունենայ իրեն մրրիկները , Այս կողմի ուժգին հողմերը պիտի խռովին ծովը և ալիքները պիտի բազմեն ասոր ափերը մինչեւ հոն ուր որ կը հասնին , և այն տեղ նոր տիեր պիտի ձեւանան և քայլացեալ հողերը ջուրին տակ պիտի երթան և բաւական տարածութեամբ ծովունյատակը պիտի նատին , որով զարիթափը պիտի մեղմանայ եւ յատակը պիտի բարձրանայ . Այս առաջանին մէջ հոսող ջուրը պիտի բերէ իրեն հետ խիճ ու տիզմ . որոնք կամաց կամաց հողա-

կոյսիր պիտի ձեւանան , վերջը Տէրտնել . Այս պատահարները այսպիսի անձուկ և նուաղ խորութեամբ մը ծովու մէջ կարելի չէ զանց առնել . հաստատուն նիւթոց այս եկամուտները անզգալի կերպով ծովունյատակը պիտի բարձրացնեն և յամանակէ մը յետոց նուարիութիւնը անկարելի պիտի ընեն , և մի քանի գարեր բաւական պիտի ըլլան այս ձախող արդիւնքը յառաջ բերելու :

Այս սահարացեան ծովուն սպառնացող վտանգներուն փոքրագոյնն է : Ամենասոսկալի վտանգը պիտի ըլլայ ջրանդքը , առանց որոյ գործն անկարելի է ՚ի կատար հանել : Այս ջրանցքը հաղորդակցութեան պարզ ջրանցք մի չի պիտի ըլլայ , ինչպէս որ է Սուելի զի ջրանցքը գրեթէ մի և նոյն մակարածարութիւնը ունեցող երկու ծովերու միջեւը , այլ քուցիչ ջրանցքը մի , ուրիէ անցնող ջրոյ հոսանքը ներքին ծովը լեցնելու բաւականութեամբ պիտի ունենայ ծաւալ և արագութիւն լնդունելով Պ. Բուտէրի հետ , որ ներբին ծովին օրը երեսունը ինը միլիոն խորանարդ մեղր ջուր պիտի բարձրանայ շոգիացմամբ , ուրիշն ջրանցքը 39 միլիոն խորանարդ ջուր պիտի մատակարարէ ծովուն մակհաւատորութիւնը սկսիսկուս պահելու համար . Արդ՝ օրը այսօքան ջուր տուող ջրանցքը գետակ մի և նոյն իսկ գետ մի ըսել է . որովհետեւ մէկ երկվայրկենի մէջ 451 խորանարդ մեղր ջուր պիտի տայ , մինչդեռ Աէն գետը Փարիզի մէջ մէկ երկվայրկենի մէջ 130 խոր . մեղր ջուր կը տայ եւ Կարսոնը՝ Թուլուզի մէջ 150 խոր . մեղր : Երեւայեցէք միշտ շարժման մէջ եղող այսքան ծաւալ ունեցող ջրոյ զօրութիւնը . Ենթադրելով՝ որ ջրանցքին ջուրը պիտի ունենայ վերջիշտակեալ երկու գետե-

տակերտ և ընծայան հին Մաղարթայ վանից սուրբ Ստեփաննոս նախավկա յին, Տիրամայր Առառաջածնին եւ սուրբ Գէորգ զօրավարին անդառնալի և բարձր հրամանաւ մերով՝ թեմ և վիճակ, որ և սահմանեալ էր ՚ի նախ նեաց մերոց և ՚ի սուրբ Հայրապետացըն մերոց Տեառն Ներսիսէ թօսին մերոց սուրբ Լուսաւորչին, նախ և առաջին հօյսկապ և հռչակաւոր մայրաքաղաքն Նախջուան կոկ (կոդ) գաւառն բոլորովին, Խոյ, որ է Զարեւանդ գաւառն և ամենայն վիճակ իւր բոլորովին մինչ ՚ի նուռան ՚ի Ղարատարան, որ բաժանի ՚ի Մալամաստայ, ՚ի Ենրասիս մինչ ՚ի Մարտնդաց դրիւէն, Մարտնդ իւր վիճակովին, Երինթալան իւր վիճակովին գնայ մինչ ՚ի դղեակն Խոսրովու ՚ի Յաղատ և ՚ի Գիրան, ՚ի Ճուղայ և իւր վանքն, յԱստապատ և իւր վանքն, ՚ի Ճաղաց տեղն և իւր վանքն, յԱրաբը և իւր վանքն . . . տուաքը ընծայ և հայրենիք անդառնելի և բարձր հրամանաւ մինչեւ ՚ի գալուստն Քրիստոսի և ահեղ գատառատանն, և մի ոք իշխեսցէ ՚ի մեծաց և ՚ի փաքունց արդել առնուլ . . . Եւ աւարտումն եղեւ բանիս և գրիս ձեռամբ մեծանուն Տեառն Խաչայ կաթողիկոսի ամենայն Հայոց և Տէր Բարեկենի և մեծ իշխանացն Ապղարիպի իշխանին . . . Եւ Հայոց Վասակ իշխանին Սիւնեաց Գրիգոր իշխանին Ըռշունեաց, Գէորգ իշխանին Գնունեաց, Շապուհ իշխանին Արծունեաց, նամակիս և Սիկիլիս կատարիչըն օրհնին յԱստուծոց և յամենայն սրբոց, խափանիչքն դատին ՚ի Քրիստոսէ Աստուծոց մերոց, որ է օրհնեալ յաւիտեանս ամէն :

Տէր Խաչիկ կաթողիկոս ամենայն Հայոց և Պատրիարք արեւելեան տանըս, տառաքեցաք գրաւորական օրհնութեան հրամանաւս զմեծանուն եր-

ջանիկ Տէր Բարեկեն Արքեպիսկոպոսն գալ առ ձեզ և Առաքելարար շրջիլ ՚ի միջի ձերում, վարդապետէլ, խրատել և ուսուցանել յօրէնս և ՚ի պատուիրանս Տեառն . . . լինել ացիկո որբոց և այրեաց, և կարօսելոց կարեկից սիրովին Քրիստոսի, կոչեացէ զորժանաւորս և զիմաստունս ՚ի կարդ և յաստիճան կիսասարիաւագութեան, Արքիաւագութեան եւ Քահանայութեան, կացի և հրամանաւ մերով ՚ի վերայ ձերոց իշխանութիւն Առաքելարկան կապել և արձակել յերկինս և յերկրի . . . Այլ և կանոնեալ հասս և զիրաւունս զր և պարտիք տալ Աստուծոց, բաժին Աթոռոց, Տեառնականս, զնաշօրհնեան և զորբանուերս, զիրաւունս մատազաց, կենդանեաց և ննջեցելոց բազմօկանն ուն, զյանկարծամահ և զառակամահ, և զամենայն իրաւունս կենաց և մահուլիով անթերի տուք ՚ի ձեռս դօրազուարթ և աւատ սրաիւ . . . Ենորհեցաք ՚ի ձեռս դօրա ձեզ պարգեւս հոգեւորական զիւղն օծութեան սրբալոցս նորածնելոցն աւազանաւ յորդէգրութիւն Հօրն երկնաւորի և ՚ի յառանգակցութիւն Քրիստոսի Աստուծոց յոււսոցն մերոց, զնոյն ՚ի ճակատըն նշան հաստատութեան, յօծումն քահանայութեան ՚ի նորոգութիւնն Ա. Եկեղեցւոց Քրիստոսի Աստուծոց մերոց որ է օրհնեալ յաւիտեանս ամէն :

Գրեցաւ ձեռամբ Ագաթանկեղ դողի նիւ (976) տումարի Արամեան մնացուածիս :

Խաչիկ ծառայ Յիսուսի Քրիստոսի Աստուծոց մերոց, չնորհօք և ողբրմութեամբ նորին կաթողիկոս ամենայն Հայոց :

(Եպունակէլ :)

ԴԱՐՁԵԱԼ
ՆԵՐՔԻՆ ԾՈՎ

Ներքին ծովու մասին յուզուած խնդիրը վերջանալէ շատ հեռու է . զրեթէ Ակադէմեայի ամեն նիստերուն մէջ անդամներէն մին Պ. Յուտերի խորհուրդը կը քննագատէ . վերջին անգամ Պ. Նօտէն անունով մէկը նոր առարկութիւն մը հանեց, զօր մէր ընթերցողաց կը հազորդեմք կրկին նպատակաւ . նախ՝ իրը ուսումնական հետաքրքրական խնդիր, երկրորդ՝ իբրև քննագատութեան կամ վիճաբանութեան օրինակ, որ մէր մէջ զգբաղդարար ընդհանրապէս անուանարկութեամբ կ'սկսի և անուանարկութեամբ կը վերջանայ :

Պ. Նօտէն կ'ըսէ, ենթազրեմք, որ գործը ՚ի կատար ելած է, բոլոր աշխատութիւնները իրենց նողատակին հասած են, Տօմերը մինչեւ իրենց եղները ջրով լցուած են, իրենց աշխերը արագապէս թրջուած, նոյն իսկ առավարները կարեւոր խորութիւնը ունին, և նուարկութիւնը սկսած է . բայց իրաց այս վիճակը մը չամանակ պիտի տեսէ . ահա այս է կարեւոր կէտը :

Խնչպէս ամեն ծովը, մէջ և փար, նոյնովէս այս ծովը պիտի ունենայ իրեն մրրիկները, Այս կողմի ուժգին հողմերը պիտի խուռվեն ծովը և ալիքները պիտի բաղնեն ասոր ափերը մինչեւ հոն ուր որ կը հասնին, և այն տեղ նոր սիեր պիտի ձեւանան և քոյքայեալ հաղերը ջուրին տակ պիտի երթան և բաւական տարածութեամբ ծովունյատակը պիտի նատին, որով զառիթափը պիտի մեղմանայ եւ յատակը պիտի բարձրանայ : Այս աւաղանին մէջ հոսող ջուրը պիտի բերէ իրեն հետ իսկ ու տիղմ. որոնք կամաց կամաց հողա-

կոյտեր պիտի ձեւանան, վերջը Տեղաներ : Այս պատահարները սցսպիտ անձուկ և նուազ խորութեամբ մը ծովու մէջ կարելի չէ զանց առնել, հասատուուն նիւթոց այս եկամուտները անգդալի կերպով ծովուն յատակը պիտի բարձրացնեն և ժամանակէ մը յետոց նուարդիւն թիւնը անկարելի պիտի ընեն, և մի քանի գարեր բաւական պիտի ըլլան այս ձախող արգիւնքը յառաջ բերելու :

Այս սահարայեան ծովուն սպառնացող վոսնգներուն փաքրագոյնն է : Ամենասոսկալի վոսնգը պիտի ըլլայ ըրտնցքը, ուունց որոյ գործն անկարելի է ՚ի կատար հանել : Այս ըրտնցքը հազորդակցութեան պարզ ջրանցքը մի չել պիտի ըլլայ, խնչպէս որ է Սուելի ջել ջրանցքը գրեթէ մի և նոյն մակ հաւասարութիւնը ունեցող երկու ծովերու միջեւը, այլ քուցիչ ջրանցք մի, ուրիէ անցնող ջրոյ հոսանքը ներքին ծովը լցոյնելու բաւականութեամբ պիտի ունենայ ծուալ և արագութիւն լնդունելով Պ. Բաւտէրի հետ, որ ներքին ծովին օրը երեսունը ինը միլիոն խորանարդ մեղր ջուր պիտի բարձրանայ շոգիացմամբ, ուրեմն ջրանցքը 39 միլիոն խորանարդ ջուր պիտի մատակարարէ ծովուն մակհաւասորութիւնը անփափս սղահելու համար : Արդ՝ օրը այսքան ջուր տուող ըրտնցքը՝ գետուկ մի և նոյն իսկ գետ մի ըսել է . օրովհետեւ մէկ երկվաղրիենի մէջ 451 խորանարդ մեղր ջուր պիտի տայ, մինչդեռ Սէն գետը Փարիզի մէջ մէկ երկվաղրիենի մէջ 130 խոր . մեղր ջուր կը տայ եւ Կարոնը՝ Թուլուզի մէջ 150 խոր . մեղր : Երեւայեցէք միշտ շարժման մէջ եղող այսքան ծաւալ ունեցող ջրոյ զօրութիւնը . ենթազրելով՝ որ ջրանցքին ջուրը պիտի ունենայ վերսիշատակեալ երկու գետե-

րուն ջրոյ արագութիւն հաւասար արագութիւն, արուեստական գեոր պիտի ունենայ Կորոնի՝ Թուլուզի մէջ ունեցած ծաւալին երեք անդամին շափ ծաւալ, իսկ Սէնի՝ Փարիզի մէջ ունեցած ծաւալին երեք ու կէս անդամին շափ : Ի՞նչ աշխատութիւն այսպիսի ջրանցք մի պեղելու համար և բնչպիսի վտանքներ, զորս պիտի պատճառէ ահագին քանակութեամբ ջրոյ անցըը ջրանցքին ներքին երեսներու մէջ, ուր երկրորդ կակլոցած պիտի ըլլայ մեքենայներով և գործիքներով, ի՞նչ պիտի ըլլայ մանաւանդ այն ատեն, երբ ամարան սաստիկ տաքութեամբ շոգիացումը պիտի կրկնապատկի ինչպէս և ջրանցքին մատակարարած ջրոյ քանակութիւնը : Արդ՝ բնչպիս կարելի է հաւատալ թէ պիտի գիմակալեն ջրանցքին ափերը այսպիսի հեղեղի մը. ջուրը պիտի քչ տանի . ջրանցքը պիտի գոյուի և ծովուն մէջ երթալով՝ այն տեղ հողաբլուրներ պիտի կազմեն : Այս աւերանաց առաջքն առնելու մէկ միջոց կայ . որպէս զի ջրոյ ընթացքը միշտ անդժակի երապով ըլլայ, պէտք է ջրանցքը չափէն աւելի լոյն պեղել, բայց այս հսկայական աշխատութիւնն է, որ կ'ահաբեկէ Պ. Նօտէնը, և եթէ այս ալ ըլլայ, գարձեալ չ'ապահովիր : Ծովուն ջուրը միշտ պարզ չէ, խիստ եղանակներու մէջ ալիքները բարձրացընելով տիղմը և աւազը՝ առաւել կամ նուազ տարածութեամբ մը ջուրերը պիտի պղտորեն, այս պղտորեալ ջուրերը ջրանցքին մէջ մանելով՝ պիտի թանձրացնեն այն միուրին խաւը, որմէ արդէն աւաղանին մէջ կոյս : Ջրանցքը պիտի խափանուի, զոր ու բարձրութիւն կարելի չէ մաքրել, այլ միայն հաստատուն նիւթերը ծովուն մէջ քաշելով :

Վերջապէս, որովհետեւ ամենքան

պէտք է նախառական, Միջերկրականի ջուրը շատ աղի ըլլալով՝ շագիացմամբ իւր մէջ եղած աղը պիտի թռողութիւնները, զոր Պ. Նօտէն կը պարզէ . « Այս հսկայ աշխատութեան նպատակը պիտի ըլլայ ստեղծել ընդարձակագոյն ճախին մի, որ ապագայ սերնդոց համար ախտերու աղբիւր պիտի ըլլայ » :

Պ. Բուտեր պարզ կերպով կը պատասխանէ այս ամենուն գործնապէս, ներքին ծովը պիտի ունենայ մի ջրանցք 12 մեղը խորութեամբ և 50 մեղը լոյնութեամբ, ուր ջրոյ հսանդքին արագութիւնը մէկ երկվորյակենի մէջ 0.46 մեդըն տւելի չի պիտի ըլլայ, նոյն իսկ այս արագութիւնը պիտի նուազի անձրեւաց եւ գետակներու բերած ջրոյ պատճառաւ : Արդ՝ Պ. Տը-Լէսէփս հսկայատած է որ Սուէիզի և աղի լճերուն միջեւ հսաննոց երկվորյակենական արագութիւնն է մէկ մեդը, ասկէց ալ աւելի՝ գիշերահսկասարից բարձր ծովախաղաներու ատեն . այնու ամենայնիւ այս հսանդքը ապականած չէ ջրանցքին ափերը :

Թէ ներքին ծովը պիտի լեցուի շոգիացմամբ աղի կցաներով և Միջերկրականէն եկող նիւթերով, երբեմն այս պիտի ընդգիմարանութեանց Պ. Տը-Լէսէփս ալ պատահեցաւ : Կըսէին որ աղի լճերը հետղհետէ աղի կցանի մը պիտի փոխարկուին, բայց փորձը բռնընին ասոր հակառակ արդիւնք ցրցուց, որովհետեւ աղի լճերը իրենց մէջ եղած աղի ստուար կտորները լուծելով նուազուցին : Այս արդիւնքը յառաջ կը գայ հսկառակ հսանդքնե-

րէ, որը իրենց հետ կը քշեն կը տանին աղջ կտորները և ջրանցքին յատակը նստած կյանքը, «Մի և նոյն երեւոյթ՝ ները պիտի պատահին Գագեսի ջրանցքին մէջ, Եթէ բաւական լցն և երկայն լինի զոր գիւրաւ կարելի է ձեռք բերել».

Պ. Բուտերի պատասխանները կը հաստատէ ըստ ամենայնի Պ. Տը-Լէ-սէփա և կ'ըսէ, որ չէր կարող հաճոյա-

նալ այն գիտնոց որը իրեն ընդդիմութանեցին և ոչ նախատեսեալ իւր խորհրդադիմութեան մասին գմաւարութիւններ։ «Մի այնպիսի ձիւնարկ որ միշտ պիտի մնայ, կը կատարելագործութեամբ, եւ շատ անգամ մնար դէմ ելած արգելքները՝ յաջողութեանը կը նպաստեն».




Մ Ա Հ Ա Գ Ո Յ Ժ

ԵԿԻՊԱԲՆԱԿ Ռաֆայելեան Գէորգ Վէյլ ներկայ ամսայս մէջ իւր մահկանացուն կնքեց ՚ի հասակի վաթսուն և հինգ ամսաց։ Սա՝ իւր արհեստին մէջ ունեցած աննման տաղանդովը սիրելի եղած էր Եգիպտոսի Խոփիներուն եւ շատ Փաշաներու։ իւր բարեպաշտութեամբ, առատաձեռնութեամբ եւ առաքինութեամբ սիրելի եղած էր համայն աղդայնոց։ Սա՝ աղքատութեան մէջ ծնաւ, եւ իւր բնածին հանձարովը բարձրացաւ եւ հարատութեան տէր եղաւ, եւ որովհետեւ գիտէր աղքատութեան վիշտը, թշուառութեան սրտակսկիծ գառնութիւնը, ուստի իւր հարատութիւնը՝ աղքատները սփոփելու, թըշուառութիւնը միսիթարելու եւ պանտիսդութիւնը պատապարելու համար ՚ի գործ դրաւ, եւ հուսկ ամենայնի աղքատ մեռաւ, եւ իւր վերջին սպասը, յուղարկաւորութիւնը իւր Խբթի սպասաւորը կատարեց, որ Հանգուցելցն շնորհիւ այսօր մեծագումար հարստութեան տէր եղած է։ Մեռաւ անզաւակ, բայց ոչ յիշատակ, իրեն բարե-

պաշտական գործերը անմահ են և անմահ պիտի պահպանեն իւր անունն ու յիշտակը :

Պահպանները ժամանակի ժախիչ ժամեաց իւր կըլլան և կեղծանին , բայց մեն մի առարինութիւն յաւեժական կովողներ են , որ կըդիմուկալին ժամանակի եղջիւ զօրութեան եւ իրրեւ յազթականներ դարուց ՚ի գարու կը պանծան . ասոր համար է , որ Սովորուն կըսէ . “Լաւ է անզտակութիւն հանդերձ քաջութեամբ ” . իցիւթէ ամեն մահկանացուի վերաբերէր այս խօսքը . իցիւթէ ամեն մարդց կեանքը մի այսպիսի քաջաւթեամբ պատկուէր . Չը մոռնամք միշել , որ Գէորգ Պէյի վերջին տարիներուս մէջ ՚ի յիշտակ իւր հանգուցեալ Տիկնոջ շնած եւ Ա. Աթոռոց նուիրած զցդ մի աշտանակները , որ Ա. Յարութեան Տաճարին մէջ իւր հանճարին փայլեւ բովանդակ Հոյոց ազգին փառը են , Հանգուցելոյն բարեպաշտութեան անբարբառ , բայց մշտնշենական վիայներ են : Կը մազթեմք նորա հոգւոյն հանգիստ յԱստուածացին երանութեան :



ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

| | |
|--|---------|
| Ամարտացին կինն . (Նորունավելք) | 193—196 |
| Ժողովրդեան աղէաներ | 196—198 |
| Ասաղագիտական . — Երկիր . (Նորունավելք) | 198—203 |
| Նոր ասաղ Կարապ համաստեղութեան | 203—204 |
| Բնագիտութեան և Տիեզերագրութեան վրայ պարզ խօսակցութիւն . (Նորունավելք) | 205—210 |
| Ուղեւորութիւն ՚ի Ս. Էջմիածին . (Նորունավելք) | 210—212 |
| Դարձեալ նեղքին ծով | 213—215 |
| Մահազոյժ | 215—216 |

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԻ

- Ա. Ախօնը ամսէ ամիսն կը հրատարակաւի 24 երեսէ բաղկացեալ մէկուկես
ութածալ թղթով :
- Բ. Տարեկան դինն է երկու արծաթ Աշճիսին . ճանապարհի ծափող
միասին . կանխիմիկ լճարելի :
- Գ. Զատ տետրակ առնել աւզողը ոկետք է ամեն մէկ տետրին շրո գա-
հեկան վճարէ :